# Մասիս
Շաբաթաթերթ

44ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 15 (2075) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 20, 2024
VOLUME 44, NO. 15 (2075) SATURDAY APRIL 20, 2024

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Ոգեկոչում՝ Հայոց Ցեղասպանութեան 109-րդ Տարելիցի

Հայոց Ցեղասպանութեան Յանձնախումբը (AGC), որ կ՛ընդգրկէ Հարաւային Քալիֆորնիոյ հայ համայնքի հիմնական կրօնական, քաղաքական, երիտասարդական, բարեգործական, մարզական եւ հասարակական կազմակերպութիւնները, Կը յայտարարէ համայնքէն ներս լայնածաւալ հանրային միջոցառումներու կազմակերպումը:

Ապրիլ 24, 2024, ժամը 4:30ևին Կլէնտելի Քաղաքապետարանի շրջափակին մէջ (613 E. Broadway, Glendale, CA) պիտի կայանայ հրապարակային միջոցառում եւ մէկ ժամ տեւողությամբ յատուկ առցանց ծրագիր պիտի սփռուի նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին: Համայնքի անդամները եւ  աշխարհի տարբեր կողմերէն Հայեր կարող են միանալ առցանց ծրագրին AGC-ի կայքի (www.agc1915.org) եւ AGC անդամ կազմակերպութիւններու ընկերային հարթակներուն միջոցով:

Այս տարուան ոգեկոչումը կը յաջորդէ 2022 թուականի Դեկտեմբեր 12-էն մինչեւ 2023 թուականի Սեպտեմբերի 19-ը ինկած ժամանակահատուածին Ատրպէյճանի կողմէ 280 եւ աւելի օրեր տեւած Արցախի ցեղասպանական շրջափակման եւ ապա հայերու ցեղային զտումներու ենթարկման պայմաններուն տակ:

2024 թուականի Ապրիլ 18-ին Հայոց Ցեղասպանութեան Յանձնախումբը (AGC) նամակ յղած է նախագահ Պայտընին՝ դատապարտելով ԱՄՆ անգործութիւնը Արցախի ցեղասպանական շրջափակման ժամանակ եւ Պայտընի վարչակազմի ձախողումը՝ կանխելու հայերու ենթարկուած ցեղային զտումները Արցախի իրենց պապենական հողերէն:

Հայոց Ցեղասպանութեան Յանձնախումբը Պայտընի  վարչակազմէն կը պահանջէ հետեւեալը.

1. Ստեղծել ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի գլխաւորութեամբ  միջազգային հոգատարութիւն, որպէսզի ապահովէ 150,000 արցախահայութեան կեանքը եւ անոնց վերադարձի իրաւունքը իրենց պապենական հողերը՝ Հադրութ, Շուշի, Ստեփանակերտ, Մարտունի, Մարտակերտ, Ասկերան եւ Քաշաթաղ.

2. Բռնի տեղահանուած եւ Հայաստանի Հանրապետութիւն ապաստանած150,000 արցախցի փախստականներու կրթական, առողջապահական, տնտեսական եւ բնակարանային կարիքները հոգալու  համար տրամադրել 750 միլիոն տոլարի կառավարական մարդասիրական օգնութիւն.

3. Անյապաղ դադարեցնել ԱՄՆ-ի ռազմական եւ տնտեսական օգնութիւնը Ատրպէյճանին՝ համաձայն ԱԶԱՏՈՒԹԵԱՆ Աջակցութեան Ակտի 907-րդ յօդուածին.

4. Պատժամիջոցներ սահմանել Ալիեւի ռեժիմի անդամներուն նկատմամբ՝ համաձայն  Մակնիսքիի Մարդու Իրաւունքներու  Պատասխանատուութեան Ակտին՝ այդ ռեժիմի կողմէ իրականացուող շարունակական պատերազմական յանցագործութիւններուն եւ մարդկութեան դէմ յանցագործութիւններուն համար.

5. Նպաստել բոլոր հայ գերիներու, կալանաւորներու եւ պատանդներու ազատ արձակման, անոնց շարքին Արցախի 8 պաշտօնատարներուն, որոնք առեւանգուած էին 2023 թուականի Սեպտեմբեր 19-ին, Արցախի դէմ Ատրպէյճանի ռազմական յարձակումէն յետոյ.

6. Վերականգնել Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը՝  նպաստելով ատրպէյճանական բոլոր ուժերու դուրսբերման՝ 2021 թուականի մայիսէն սկսեալ  Ատրպէյճանի շարունակական ներխուժումներուն ընթացքին գրաւուած տարածքներէն.

Յանձնախումբին կողմէ հաստատուած այլ միջոցառումներ Հարաւային Քալիֆորնիոյ տարածքին կը ներառեն.

- GNZA-ի արունարշաւը համագործակցութեամբ Ամերիկեան Կարմիր Խաչի՝ Ապրիլի 21-ին, առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ Կ.Ե ժամը 3:00ևը, Նազարին Հայկական եկեղեցւոյ մէջ (411 E. Acacia Ave. Glendale CA)
- Կլէնտէլ  քաղաքի կազմակերպած ոգեկոչումը՝ Ապրիլի 21-ին, ժամը 4:30-ին Ալեքս թատերասրահէն ներս (216 N Brand Blvd., Glendale, CA)
- UACLA-ի կազմակերպութեամբ կրօնական արարողութիւն եւ ծաղիկներու տեղադրում Ապրիլի 24-ին,  ժամը 10:00-ին Մոնթեպելոյի Հայոց Ցեղասպանութեան Յուշարձանի մօտ (901 Via San Clemente, Montebello, CA);
- AYF-ի ցոյց Ապրիլ 24-ին, ժամը 12:00-ին Լոս Անճելըսի մէջ Թուրքիոյ գլխաւոր հիւպատոսութեան առջեւ (8500 Wilshire Blvd., Beverly Hills, CA):

18 Ապրիլի, 2024

## Հայաստանի եւ Ատրպէյճանի Միջեւ Հաւասարութեան Նշաններ Դնելը Անլուրջ Են եւ Անամօթ. Եղիշէ Կիրակոսեան

*Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեանը անամօթ ու անլուրջ որակած է ատրպէյճանական կողմին քայլերը, որ կը փորձէ Արդարադատութեան միջազգային դատարանին մէջ «Հայաստանն ընդդէմ Ատրպէյճանի» գործով լսումներու ընթացքին հաւասարութեան նշան դնել Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ:*



Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեան

*Արդարադատութեան միջազգային դատարանին մէջ լսումներու ընթացքին ունեցած ելոյթին մէջ Եղիշէ Կիրակոսեանը յիշեցուցած է, որ 2021 թուականի Սեպտեմբեր 16-ին Հայաստանը վարոյթ յարուցած է Ատրպէյճանի դէմ, քանի որ այդ պետութեան կողմէ ցեղապաշտական խտրականութեան աղաղակող քաղաքականութիւն կ՛իրականացուի ազգութեամբ հայերու նկատմամբ:*

*«Ատրպէյճանի երեխաներին դպրոցական դասագրքերում սովորեցնում են ատել եւ սպաննել հայերին: Պետական լրատուամիջոցները ատելութեան խօսք են տարածում, պետական պաշտօնեաները կոչ են անում ի սպառ վերացնել հայերին: Դա պետութեան կողմից թոյլատրուած համատարած ցեղապաշտութիւն է»,- ընդգծած է Կիրակոսեանը:*

*Ան նշած է, որ ցեղապաշտական խտրականութեան այս երկարաժամկէտ պետական քաղաքականութիւնը իր գագաթնակէտին հասած է, երբ Ատրպէյճանը նախա-*

Շար.ը էջ 6

## ԱՄՆ Հայաստանին Պիտի Տրամադրէ Շտապօգնութեան Ջրահապատ Մեքենաներ

*Միացեալ Նահանգները եւ Հայաստանը շատ աշխոյժ եւ բովանդակալից քննարկումներ կ՛ունենան անվտանգութեան եւ պաշտպանութեան մասին, այդ նոյնպէս շարունակական թեմա է: Այս մասին յայտնած է Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը «Ազատութեան» տուած հարցազրոյցի ընթացքին:*



Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Քրիսթինա Քվին

*Անցեալ շաբաթ Պրիւքսէլի մէջ Հայաստանի արեւմտեան գործընկերները խոստացան յաւելեալ ֆինանսական աջակցութիւն եւ վերահաստատեցին իրենց յանձնառութիւնը Հայաստանի տնտեսութեան ու ժողովրդավարութեան ամրապնդման: Արդեօք որեւէ համաձայնագիր ստորագրուած է՝ երաշխաւորելու, որ այս աջակցութիւնը ըլլայ շարունակական՝ անկախ, թէ ինչպէս պիտի աւարտին քանի մը ամիսէն Պրիւքսէլի ու ԱՄՆ-ի մէջ սպասուող ընտրութիւնները:*

*«Ազատութեան» հարցումին ի պատասխան, ԱՄՆ դեսպանը պատասխանած է. «Պայմանաւորուածութիւնը այն էր, որ մենք պարզապէս պիտի շարունակենք մեր շատ լաւ եւ աճող երկխօսութիւնը: Կրնամ ըսել, որ անցած մէկ տարուան մէջ, ինչ ես եկած եմ Հայաստան, մեր յարաբերութիւնները գրեթէ բոլոր ոլորտներու մէջ ընդլայնուած եւ խորացած են: Եւ ես կը կարծեմ, որ այն ամէնը, որ մենք ընդգծեցինք պրիւքսէլեան բարձր մակարդակի հանդիպման ընթացքին, պարզապէս ցոյց կու տայ այն յառաջընթացը, որուն հասած ենք, յատկապէս՝ վերջին քանի մը տարիներուն: Եւ ես կը կարծեմ, որ յառաջիկային պիտի շարունակենք յառաջընթացը»:*

*Միացեալ Նահանգները կը դիտարկէ՞ Հայաստանի սահմանին Եւրոմիութեան դիտորդական առա-*

Շար.ը էջ 6

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# «Դաշնակից Երկիրը» Գործակալների Մոբիլիզացիա է Յայտարարել

ՀԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

*Ռուսաստանում ապրող, արարող, բայց իրեն «ալամ աշխարհի հայերի միութեան» նախագահ հռչակած Արա Աբրահամեանը «Ռուսաստանի հայերի միութեան» անունից որոշել է ձայնակցել «Նիկոլը յանձնում ա Տաւուշի հայկական հողերը» քարոզչական սպեկուլիացիային եւ բնականաբար, առիթն օգտագործելով՝ եւս մէկ անգամ պահանջել Նիկոլ Փաշինեանի հրաժարականը:*

*Նախքան այս յայտարարութեան բովանդակութեանն անդրադառնալը արձանագրենք՝ դաշնակից երկիրը, որն արդէն տեւական ժամանակ է՝ իր ազդեցութեան գործակալների մոբիլիզացիա է յայտարարել՝ տարատեսակ քաղաքական կուսակցութիւնների, «փրկութեան ճակատների» ու «համազգային շարժումների» եւ անհատ, ընդհուպ՝ վեղարաւոր փրկիչների տեսքով, փաստօրէն, չի մոռացել ներգրաւել նաեւ մի գործչի, որի խօսքի լրջութեանը Հայաստանում մշտապէս վերաբերուել են՝ ըստ արժանւոյն՝ քմծիծաղով ու երգիծանքով:*

*Ցընթացս յիշեցնենք, որ պարոն Աբրահամեանը 2016-ին իր ելոյթներից մէկում անկեղծացել էր, թէ ինքը ռուսերէն վատ գիտի եւ ամուսնացել է ռուս աղջկայ հետ, որպէսզի ռուսերէն սովորի, «բայց ցաւօք, այդպէս էլ չեմ կարողացել», իսկ հայերն էլ գիտի... «մի քիչ բաւականին»:*

*«Մենք պատրաստւում էինք գրել մի այսպիսի գիրք Հայ ժողովրդի դերը միջին դարերում ունեցած... մենք որպէս, ասենք, առեւտրական նաւատորմի ազդեցութիւնը... ես ռուսերէնը չսովորեցի, հայերէնն էլ մի քիչ բաւականին... «Ռոլ Արմենիա միջին դարերի...»,- «Ռուսաստանի Դաշնութեան հայկական սփիւռքը» խորագրով գիտաժողովի ժամանակ խօսքը չէր կարողացել աւարտել Աբրահամեանը:*

*Երեւի հենց այս՝ վատ ռուսերէնի եւ հայերէնի «մի քիչ բաւականին» իմանալու հետեւանքով է, որ պարոն Աբրահամեանը չի ըմբռնել, թէ ինչ է յայտարարում ՀՀ իշխանութիւնը հայ-ատրպէյճանական յարաբերութիւնների կարգաւորման, սահմանազատման գործընթացի եւ այն մասնաւորապէս Տաւուշի մարզից սկսելու մասին:*

*Աջակցելով Մայր Աթոռի յայտարարութեանը՝ Աբրահամեանի գլխաւորած միութիւնը կոչ է արել գործարարներին, մշակոյթի, գիտութեան, սպորտի գործիչներին, հասարակական-քաղաքական գործիչներին «բացայայտ արտայայտուել Տաւուշի մարզում հայկական հողերը յանձնելու՝ իշխանութիւնների մտադրութիւնների վերաբերեալ»:*

*Տեղեակ չենք՝ ո՞ր լեզուով է պարոն Աբրահամեանը կարդացել սահմանազատմանը, մասնաւորապէս Տաւուշին վերաբերող լուրերը, աւելի ճիշտ՝ ո՞ր լեզուով են նրան այդ թեմայով զեկուցել շահագրգիռ սուբիեկտները, բայց ակնյայտ է՝ նա ինչ-որ բան լսել ու չի հասկացել կամ էլ լսել, հասկացել է, բայց միտումնաւոր խեղաթիւրում է իմացածն ու, ինչպէս ժողովուրդն է ասում, իրեն գցում է «դողերի բախչէն»:*

*Հումանիզմ ցուցաբերելով ՌՀՄ ղեկավարի նկատմամբ՝ եւս մէկ անգամ նշենք, որ ՀՀ իշխանութիւնը չի պատրաստւում կատարել ՀՀ քրէական օրէնսգրքով պատիժ նախատեսող գործողութիւն՝ ՀՀ տարածքից՝ «Տաւուշի մարզի հայկական հողերից» որեւէ փուշ կամ փշուր յանձնել որեւէ մէկին:*

*Այնպէս որ, պարոն Աբրահամեանն ու այն երկիրը, որի հողում վերջինս գտնւում է, կարող են անջատել իրենց քարոզչական «սիրենան»: Աբրահամեանին այդ հողերը որպէս հայկական ներկայացրած սուբիեկտները երեւի մոռացել են Վայոց ձորի մարզի Մալիշկա գիւղում ծնուածի սեղանին դնել իրեն հասանելի լեզով «սպռավոչկա», որտեղ նշուած են «յանձնուելիք» գիւղերի տեղանունները՝ Բաղանիս Այրում, Աշաղը Ասքիփարայ, Խեյրիմլի եւ Ղըզըլհաջիլի:*

*Տաւուշի մարզում այսպիսի տեղանուններով «հայկական հողեր» չկան, Աբրահամեանը երեւի Հայաստանի պատմութիւնն ու աշխարհագրութիւնն էլ լաւ չի իւրացրել, այլապէս ինտերնետի դարում կ՛օգտուէր ամենապարզ գործիքներից՝ կ՛այցելէր Տաւուշի մարզպետարանի պաշտօնական կայք, կը ծանօթանար մարզի գիւղերի ու բնակավայրերի ցանկին:*

*Ի դէպ, միջին դարերում հայերի ունեցած դերի մասին գիրք տպելու մտադրութիւն ունեցած Աբրահամեանի տեքստում անդրադարձ կայ նաեւ վարչապետ Փաշինեանի՝ ԱԺ-ում ունեցած ելոյթին:*

*«Փաշինեանի ելոյթը խորհրդարանում, որտեղ նա այս անգամ Հայաստանի անվտանգութեան համար սպառնալիք անուանեց հենց Հայաստանը՝ պատմական Հայաստանը, հերթական անգամ ի ցոյց դրեց 2018 թուականից Հայաստանի, այսպէս կոչուած, «թաւշեայ իշխանութեան» կողմից իրականացուող նպատակային կուրսի ողջ վտանգաւորութիւնը»,- ասել է նա:*

*Թէ այդ ի՞նչ «նպատակային կուրսի» մասին է խօսում Աբրահամեանը, կարող ենք գլխի ընկնել նախքան 44-օրեայ պատերազմը ՌԴ տեղական գործակալ-քարոզիչներն այդ «կուրսն» անուանում էին «Սորոսի ծրագրով հողերը տալ»: Հիմա էլ, երեւի, շարունակելով խափանել Սորոսի ծրագիրը (այս անգամ առանց նրա անունը տալու), Աբրահամեանն ու նրա ինստրուկտորները որոշել են յանձնումից փրկել Տաւուշի «հայկական հողերը» եւ հաւանաբար հետ բերել նաեւ պատմական Հայաստանի հողերը, մասնաւորապէս՝ մէկ եւ աւելի դար առաջ յանձնուած Սասունը, Վանը, Մուշը, Ալաշկերտը, Արդահանը եւ այսպէս շարունակ: Ջէ՞ որ Աբրահամեանն իզուր չէ, որ*

Շար.ը էջ 6

# Պրիւսելի Հանդիպման Արդիւնքները Բխում Են Օբիեկտիւ Իրողութիւններից

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

*Ապրիլի 5-ին Պրիւսելում տեղի ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Եւրայանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եւ ԵՄ արտաքին գործերի ու անվտանգութեան քաղաքականութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի մասնակցութեամբ գագաթնաժողովը:*

*Այս հանդիպմանը նախորդել էին բազմաթիւ շահարկումներ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Հայաստանից դուրս: Հայաստանեան տարբեր մեկնաբաններ մի քանի շաբաթ բաւականին բարձր ակնկալիքներ էին ձեւաւորում հանրութեան մօտ՝ պրիւսելեան հանդիպումը ներկայացնելով գրեթէ որպէս շրջադարձային պահ Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ:*

*Ռուսաստանն ու Ատրպէյճանը իրենց հերթին հանդիպումը որակում էին որպէս Հարաւային Կովկասում բաժանարար գծեր ստեղծելու փորձ: Հետաքրքրական է, որ այս թեմայով Մոսկուայի եւ Պաքուի ոչ միայն դիրքորոշումներն են նոյնական, այլեւ՝ բառապաշարը:*

*Այնուամենայնիւ, ի հեճուկս այս բոլոր շահարկումների՝ ինչպէս եւ յայտարարւում էր ԱՄՆ-ի եւ ԵՄ պաշտօնեաների հետ հանդիպումից առաջ, այն առաջին հերթին տնտեսական ուղղուածութիւն ունէր: Գագաթնաժողովի արդիւնքում տարածուած համատեղ յայտարարութեան մէջ նշուեց յառաջիկայ չորս տարիների ընթացքում Հայաստանին ԵՄ կողմից 270 միլիոն եւրօ, իսկ ԱՄՆ-ի կողմից 65 միլիոն տոլար ֆինանսական աջակցութիւն յատկացնելու մասին: Յայտարարութիւնում խօսուեց նաեւ Հայաստանի համար ռիսկերը մեղմելու, առեւտուրը դիվերսիֆիկացնելու, ինչպէս նաեւ տնտեսական եւ ինստիտուցիոնալ դիմակայունութիւնը ամրապնդելու ԵՄ ու ԱՄՆ-ի յանձնառութեան մասին:*

*Հանդիպման արդիւնքներն առաջին հերթին փաստում են, որ թէ Ուաշինկտոնում, թէ Պրիւսելում կայ գիտակցում, որ Հայաստանի արտաքին քաղաքական դիվերսիֆիկացիան երկարատեւ գործընթաց է, որին պէտք է նախորդի առկայ կառուցուածքային խնդիրների լուծումը:*

*Խօսքը, մասնաւորապէս, Ռուսաստանից Հայաստանի տնտեսական ու էներգետիկ կախուածութիւնը մեղմելու անհրաժեշտութեան մասին է: Մինչ պրիւսելեան հանդիպումը, Հայաստանի կառավարութիւնը ռիսկերի գնահատմանն ուղղուած հետազօտութիւններ էր իրականացրել, որոնք կարճաժամկէտ կտրուածքով Ռուսաստանից տնտեսական կախուածութիւնը նուազեցնելու հարցում լաւատեսութեան հիմքեր չէին տուել: Իսկ առանց այդ կախուածութեան նուազեցման ուղղութեամբ համակարգային աշխատանքի արտաքին քաղաքական հարցերում փունդամենտալ փոփոխութիւնների մասին խօսակցութիւնները միայն տեսական բնոյթ կարող են կրել:*

*Այդ առումով պրիւսելեան հանդիպումը կարելի է տուեալ խնդրի լուծման ուղղութեամբ Արեւմուտքի եւ Հայաստանի համատեղ աշխատանքի փորձի պաշտօնական մեկնարկը համարել:*

*ԱՄՆ-ն եւ ԵՄ-ն ուղիղ տեքստով յայտարարում են, որ Հայաստանին յատկացուելիք գումարներն առաջին հերթին արտաքին առեւտրի դիվերսիֆիկացիայի եւ տնտեսական դիմակայունութեան ուժեղացմանն են ուղղուած լինելու: Այսինքն, Ռուսաստանից միակողմանի կախուածութեան թուլացմանը: Սա, իհարկէ, չի նշանակում, որ ԵՄ-ն կամ ԱՄՆ-ն այս փուլում պատրաստ են Հայաստանին տնտեսական այլընտրանքներ առաջարկել: Այժմ խօսքն առաջին հերթին Հայաստանի կողմից՝ Պրիւսելի եւ Ուաշինկտոնի աջակցութեամբ, սեփական տնային աշխատանքը կատարելու եւ միջնաժամկէտ ու երկարաժամկէտ կտրուածքով տնտեսական դիվերսիֆիկացիան աւելի իրատեսական դարձնելու ջանքերի մասին է:*

*Կառուցուածքային այս սահ-*

Շար.ը էջ 6

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր տեսակէտները


Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

**ԼՈՒՐԵՐ**

## ՀՀ-ի Մէջ Ծանր Յանցագործութիւններու Աճը Պայմանաւորուած է Օրէնսդրական Փոփոխութիւններով. Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան

*Հայաստանի մէջ ծանր եւ առանձնապէս ծանր յանցագործութիւններու աճը պայմանաւորուած է Քրէական օրէնսդրութեան մէջ կատարուած փոփոխութեամբ, որուն համաձայն՝ քրէական գործեր կը յարուցուին նաեւ յանկարծամահութեան դէպքերով:*

*Կառավարութեան նիստին այս մասին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ անդրադառնալով այն արձանագրումներուն, որ Հայաստանի մէջ ծանր եւ առանձնապէս ծանր յանցագործութիւններու թիւը 90 տոկոսով աճած է:*

*«Պէտք է ասեմ, որ 90 տոկոսանոց աճը պայմանաւորուած է օրէնսդրութեան մէջ փոփոխութեան հետ: Ներկայումս բոլոր յանկարծամահութեան դէպքերի առիթով յարուցւում է քրէական գործ: Կիրառումը ցոյց է տալիս, որ արդարացուած է, որովհետեւ լինում են այդպիսի դէպքեր, որ շատ նման է յանկարծամահութեան, բայց յետոյ քրէական գործի շրջանակներում պարզւում է, որ իրականում սպանութիւն է տեղի ունեցել: Բայց դէպքերի մեծ մասով, ի հարկէ, հերքւում է»,- նշեց Փաշինեան:*

*Վարչապետը խոստովանեցաւ, որ 27 տոկոսի աճ կայ առանձնապէս ծանր յանցագործութիւնների, բայց աճի մէկ մասն ալ պայմանաւորուած է օրէնսդրական փոփոխութիւններու հետ:*

*«Ընդհանուր առմամբ, պէտք է արձանագրենք, որ յանցաւորութեան դէմ պայքարը լուրջ մարտահրաւէր է: Մենք շատ զգայուն ենք նաեւ գլոսաշրջիկների հետ կապուած յանցագործութիւնների վերաբերեալ, որովհետեւ դա կարող է վատ պատկեր ստեղծել: Ներքին գործերի նախարարի, Ազգային Անվտանգութեան Ծառայութեան, դատաիրաւական մարմինների ներկայացուցիչների հետ ժամանակ առ ժամանակ քննարկում ենք, թէ ինչպէս յանցաւորութեան դէմ պայքարն աւելի արդիւնաւէտ դարձնենք»,- ըսաւ Փաշինեան:*

## Պաշտպանութեան Նախարարութեան Պաշտօնեան Կը Մեղադրուի 125.000 Տոլար Կաշառք Ստանալու Մէջ

*ԱԱԾ-ի մէջ նախաձեռնուած եւ ՀՀ Հակափտածութեան կոմիտէին մէջ քննուած քրէական վարոյթով կատարուած նախաքննութեամբ պարզուած է, որ Վ.Մ.-ն, հանդիսանալով ՀՀ ՊՆ տարածքային զինուորական կոմիսարիատներէն մէկուն զօրակոչի բաժանմունքի պետի պաշտօնակատար, շարք մը զօրակոչիկներու օգտին ապօրինի գործողութիւն կատարելու՝ կեղծ բժշկական ախտորոշումներու հիման վրայ զինուորական ծառայութեան հերթական զօրակոչէն տարկէտում տրամադրելու կամ զինուորական ծառայութենէն ազատելու հիմքեր ստեղծելու համար տարբեր անձերէ պահանջած եւ ստացած է առանձնապէս խոշոր չափերով՝ ընդհանուր 125.000 ԱՄՆ տոլար կաշառք:*

*Մասնաւորապէս՝ 2022թ. Դեկտեմբերին Վ.Մ.-ն, տեղեկանալով, որ բժշկական կեդրոններէն մէկուն տնօրէն Ա.Մ.-ն հնարաւորութիւն ունի ձեռք բերելու զօրակոչի ենթակայ անձերու ժամկէտային զինուորական ծառայութենէն ազատելու համար հիմք հանդիսացող «արախնոիտալ քիսթա» ախտորոշմամբ բժշկական եզրակացութիւններ, 5 տարբեր զօրակոչիկներու օգտին ապօրինի գործողութիւններ կատարելու նպատակով անոր առաջարկած է գումարի դիմաց ձեռք բերել եւ իրեն տրամադրել յիշեալ կեղծ եզրակացութիւնները:*

*Վ.Մ.-ին մեղադրանք ներկայացուած է, անոր օժանդակած Ա.Մ.-ին մեղադրանքներ ներկայացուած են:*

## Պետութեան Վերադարձուած է 10 Միլիառ Դրամի Գոյք՝ 6 Ամսուան Ընթացքին

*ՀՀ կառավարութեան որոշմամբ՝ Պետական գոյքի կառավարման կոմիտէին ամրացուեցաւ Դատախազութեան՝ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման լիազօրութեան շրջանակին մէջ կնքուած հաշտութեան համաձայնութեամբ պետութեան վերադարձուած՝ 2 միլիառ 18 միլիքն 400 հազար դրամ շուկայական արժէքով Աւան վարչական շրջանի Աճառեան փողոցին վրայ գտնուող՝ 16.013 քմ մակերեսով հողամասը:*

*Ըստ Գլխաւոր Դատախազութեան տարածած հաղորդագրութեան, հաշտութեան համաձայնութիւնը հաստատուած էր Հակափտածութեան դատարանի՝ 2024 թուականի Փետրուար 27-ի վճիռով:*

*Դատախազութենէն յաւելած են, որ վերջին վեց ամսուան ընթացքին՝ 2023 թուականի 4-րդ եռամսեակին եւ 2024 թուականի առաջին եռամսեակին Դատախազութեան երկու բացառիկ լիազօրութիւններու՝ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման եւ պետական շահերու պաշտպանութեան ծիրին մէջ, պետութեան վերադարձուած է շուրջ 10 միլիառ դրամի գոյք:*

## ՊՆ-ն 300 Միլիոն Տոլարի Պատուէր Տուած է Ռազմական Արդիւնաբերութեան 25 Հայկական Ընկերութիւններու



Բարձր արհեստագիտութիւններու արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեան

*Բարձր արհեստագիտութիւններու արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեանը տեղեկացուցած է, որ իրականացուած են քանի մը զինատեսակի եւ կառավարման համակարգերու վերաբերեալ փորձարկումներ, որոնք մօտ ապագային հնարաւորութիւն պիտի ունենան կիրառուելու Զինուած Ուժերուն մէջ:*

*Անոր խօսքով՝ ռազմարդիւնաբերութեան ոլորտին մէջ գործող բոլոր ընկերութիւններուն հետ հանդիպումներուն վեր հանած են մարտահրաւէրներն ու խնդիրները: Ըստ անոր, արձանագրուած է ռազմաարդիւնաբերութեամբ զբաղող քանի մը նոր ընկերութիւնգ. «Մշակուել է ռազմարդիւնաբերական համալիրի տարրերի արտադրական հզօրութիւնների զարգացման հիմնադրամի հայեցակարգը, որը հնարաւորութիւն է տալու մեծ արդիւնաւէտութեամբ զարգացնել ռազմարդյունաբերութեան ոլորտը»,- ըսած է ան:*

*Նախարարը նաեւ տեղեկացուցած է, որ ռազմարդիւնաբերողները այս պահին 122 միլիառ դրամի պատուէր ստացած են Պաշտպանութեան Նախարարութենէնգ. «Գործող 25 կազմակերպութիւն պատուէր ունի ՊՆ-ից: Մենք ակնկալում ենք, որ տարուայ ընթացքում այն կը հասնի 29-ի: Այս պահին ունենք կնքուած 46 եռամեայ պայմանագիր: ՊՆ-ն այս պահին 122 միլիառ դրամի պատուէր է տուել կազմակերպութիւններին, ակնկալում ենք, որ տարուայ կտրուածքով պատուէրների ընդհանուր գումարը կը կազմի 191 միլիառ դրամ»,- ըսած է ան:*

## «Հանքերու Արքայ» Վարդան Այվազեանը, Անոր Կինը, Դուստրը, Որդին Ու Փոխկապակցուած Այլ Անձեր Հրաւիրուած Են Դատախազութիւն



Բնապահպանութեան նախկին նախարար, Ազգային Ժողովի նախկին ՀՀԿ-ական պատգամաւոր Վարդան Այվազեան

*Բնապահպանութեան նախկին նախարար, Ազգային Ժողովի նախկին ՀՀԿ-ական պատգամաւոր Վարդան Այվազեանը, անոր կինը՝ Մարիամ Գինոսեանը, դուստրը՝ Արմինէ Այվազեանը, ինչպէս նաեւ փոխկապակցուած շարք մը անձեր՝ Գագիկ եւ Սուրէն Այվազյեանները, Յարութիւն Մուրատեանը Ապրիլ 19-ին հրաւիրուած են ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւն: civicq.am-ը հրապարակային ծանուցումներու պաշտօնական համացանցային կայքէն տեղեկացաւ, որ յիշեալ անձերուն պատկանող գոյքերու նկատմամբ կատարուած է ուսումնասիրութիւն, կազմուած են ամփոփագրեր:*

*Ըստ մամուլի հրապարակումներու՝ Վարդան Այվազեանը ունի բազմաթիւ հանքեր, որոնք սակայն ձեւակերպուած են անոր ազգականներուն կամ ընկերներուն անուններով: Նախարարը առանձնայատուկ սէր ունի յատկապէս ոսկիի, պղնձի, մոլիպտենի եւ երկաթի հանքավայրերու նկատմամբ: Գայթակղալից պատմութիւններու կիզակէտին մշտապէս յայտնուած նախկին պաշտօնեային հետ կապուած մամուլին մէջ սկսաւ պատմութիւն շրջանառուիլ 2005-ին: Կը նշուէր, որ այն ժամանակ տակաւին բնապահպանութեան նախարարի պաշտօնը զբաղեցնող Վարդան Այվազեանի եւ ոսկի արդիւնահանող «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ընկերութեան յարաբերութիւնները խիստ լարուած եղած են: Արդէն 2006-ին յայտնի դարձաւ, որ Վարդան Այվազեանը «Գլոբալ Գոլդից» 3 միլիոն տոլար կաշառք պահանջած է: Այվազեանը, իր պաշտօնական դիրքը օգտագործելով, ընկերութիւնը զրկած էր Հանքաւանի մէջ գտնուող ոսկիի հանքի շահագործման արտօնագրէն, որ պէտք է ուժի մէջ ըլլար մինչեւ 2017 թուական: 2006-ի Յունուար 19-ին «Գլոբալ Գոլդի» շահերը ներկայացնող ամերիկեան իրաւաբանական գրասենեակ մը նամակ-առաջարկով դիմած էր Ռոպերթ Քոչարեանին, այն ժամանակուայ արտաքին գործերու նախարար Վարդան Օսկանեանին, առեւտուրի եւ զարգացման նախարար Կարէն Ճշմարիտեանին, արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեանին եւ նոյն ինքն Վարդան Այվազեանին:*

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանը Շատ Կարեւոր եւ Վստահելի Գործընկեր է Ղազախստանի Համար. Ըսաւ Քասիմ-Ժոմարթ Թոքաեւ



վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Ղազախստանի Հանրապետութեան նախագահ Քասիմ-Ժոմարթ Թոքաեւ համատեղ ասուլիսի ժամանակ

«Առաջին անգամ պաշտօնական այցով Երեւանի մէջ եմ եւ կ՚արտայայտեմ իմ երախտագիտութիւնս Հայաստանի ժողովուրդին, որ ջերմօրէն ընդունեց Ղազախստանի պատուիրակութիւնը»:

Այս մասին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ ըսաւ պաշտօնական այցով Հայաստան ժամանած՝ Ղազախստանի Հանրապետութեան նախագահ Քասիմ-Ժոմարթ Թոքաեւը:

«Մենք յատուկ յարգանքով կը վերաբերինք Հայաստանի հինաւուրց պատմութեան, հարուստ մշակոյթին եւ աւանդոյթներուն:

«Հայաստանը շատ կարեւոր եւ վստահելի գործընկեր է Ղազախստանի համար Հարաւային Կովկասի մէջ: Մեր յարաբերութիւնները հիմնուած են անքակտելի բարեկամութեան եւ փոխօժանդակութեան վրայ: Մեր նպատակները տարածաշրջանային եւ միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան ամրացման տեսանկիւնէն կը համընկնին:

«Մենք հետաքրքրուած ենք Հայաստանի հետ համակողմանի գործընկերութեան հետագայ զարգացմամբ եւ անոր համար այսօրուայ այցը ինծի համար յատուկ նշանակութիւն ունի»,- ընդգծեց Թոքաեւ:

Պաշտօնական այցով Հայաստան ժամանած Ղազախստանի Հանրապետութեան նախագահ Քասիմ-Ժոմարթ Թոքաեւը եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ստորագրեցին պաշտօնական այցի արդիւնքներով համաձայնագիր: Այնուհետեւ համաձայնագրեր կնքուեցան երկու երկիրներու շարք մը նախարարութիւններու միջեւ:

Մասնաւորապէս՝ Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ գաղթի մասին համաձայնագիր եւ Հայաստանի կառավարութեան եւ Ղազախստանի կառավարութեան միջեւ քաղաքացիներու, այցելութիւններու եւ գտնուելու կարգի մասին համատեղ համաձայնագիր եւ այլն:

Աւելի վաղ տեղի ունեցած էր Թոփաեւի եւ Փաշինեանի առանձնազրոյցը:

## «ԱՄՆ եւ Իր Դաշնակիցները Կը Փորձեն Խանգարել Հարաւային Կովկասի Մէջ Կայունութիւնը». Լաւրով

«ԱՄՆ ու իր դաշնակիցները կը փորձեն խանգարել Հարաւային Կովկասի մէջ կայունութիւնը»գ. Լաւրով ԱՄՆ-ն ու իր արբանեակները կը փորձեն խաթարել Ռուսաստանի աջակցութեամբ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու իրագործումը: Այս մասին յայտնած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրովը Մինսքի մէջ ԱԳՆ խորհուրդի նիստէն յետոյ կայացած մամուլի ասուլիսին ընթացքին:



Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով

«Անոնք (ԱՄՆ-ը եւ դաշնակիցները) կը փորձեն ներխուժել յետխորհրդային տարածքի բոլոր շրջանները, միջամտել Հարաւային Կովկասի մէջ իրավիճակի կայունացման գործընթացին եւ չեն ուզեր թոյլ տալ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ պայմանաւորուածութիւններու իրագործումը, որ ձեռք բերուած է Ռուսաստանի աջակցութեամբ»,- ըսած է Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը:

ԱՄՆ-ն աշխուժօրէն կ՚աշխատի նաեւ Կեդրոնական Ասիոյ մէջ, ուր կը ստեղծուին տարբեր ձեւաչափեր՝ ուղղուած Ռուսաստանի դէմ: Անոր խօսքով՝ Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցները կը գտնուին հսկայական ճնշման տակ, սակայն անոնք հաւատարիմ կը մնան ընդհանուր արժէքներուն եւ սկզբունքներուն, որոնց վրայ հիմնուած են համարկման կառոյցները՝ ԵԱՏՄ-ն, ԱՊՀ-ն ու ՀԱՊԿ-ը: Ան համոզուած է, որ ռազմավարական առումով Արեւմուտքի գիծը դատապարտուած է ձախողման:

## Ատրպէյճանի Յարձակման Անցնելու Նախապատրաստութիւնը Չեզոքացուեցաւ ԵՄ Դիտորդներուն Շնորհիւ



Ազգային Ժողովի «ՔՊ» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Խաչատրեան

«Բանակի փոփոխութիւնները արժեզրկող յայտարարութիւններ են անում: Զինուորականների աշխատավարձերը անընդհատ բարձրացւում են»: Այս մասին ըսաւ Ազգային Ժողովի «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Խաչատրեանը՝ անդրադառնալով ԱԺ ընդդիմադիրներու խօսքերուն, թէ զինուորականներուն աշխատավարձերը չեն բարձրացուիր:

Արմէն Խաչատրեան նշեց, որ տարիներ շարունակ ռազմական հիմնարկ աւարտածները չունէին բաւարար արհեստավարժութիւն. «Հիմա բազմաթիւ փոփոխութիւններ են արուել, ու Ակադեմիան ընդգրկուել է լաւագոյն 19 ռազմական ակադեմիաների ցանկում: Ուսումնառութեան գործընթացը բերուել է միջազգային մակարդակի վրայ, ու կոչ եմ անում երիտասարդներին դիմել ու ընդունուել Ռազմական ակադեմիա»:

Այն դիտարկման, թէ ընդդիմադիրները դժգոհ են նաեւ ԵՄ դիտորդներէն, Խաչատրեան ըսաւ. «ԵՄ դիտորդական առաքելութիւնից բողոքում են Ատրպէյճանը, Ռուսաստանը ու մեր ընդդիմադիրները. հիմա հետեւութիւնը արէք: Այս փիրուն խաղաղութիւնը դիտորդների շնորհիւ է նաեւ, մի քանի օր առաջուայ Ատրպէյճանի նախապատրաստական գործողութիւնները՝ ռազմական յարձակումների անցնել, չէզոքացուեցին ԵՄ դիտորդների շնորհիւ: Մեր ընդդիմութիւնը գործում է այլ երկրների թելադրանքով ու շահերով»:

Ըստ Խաչատրեանի՝ խորհրդարանական ընդդիմութիւնը շահագրգռուած է անով, որ Հայաստանի մէջ որոշակի քաղաքական հոլովոյթներ, ցնցումներ յառաջացնեն ու խաղաղութեան դէմ գործողութիւններ կատարեն, անոր համար ալ անոնք նաեւ յառաջ կը բերեն Լեռնային Ղարաբաղի վտարանդի կառավարութեան հարց. «Չի կարող լինել վտարանդի կառավարութիւն, որի կառավարման առարկան այլ վայրում է»:

## Հայաստանը Չենք Դիտարկեր Որպէս 3-Միլիոնանոց Շուկայ, Այն Մեզի Համար Հարթակ Է. Իրանի Դեսպան



Իրանի դեսպան Մեհտի Սոպհանի

Իրանը Հայաստանը կը դիտարկէ որպէս ամենակարճ ճանապարհը դէպի Եւրասիական Տնտեսական Միութեան 200-միլիոնանոց շուկայ: Երեւանի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին այս մասին ըսած է Իրանի դեսպան Մեհտի Սոպհանին:

Անոր խօսքով՝ շուտով Հայաստանի մէջ պիտի բացուի Իրանի առեւտուրի տուն:

«Մենք Հայաստանը չենք դիտարկեր որպէս 3-միլիոնանոց շուկայ, մեզի համար այն հարթակ է, որով մենք կրնանք դուրս գալ դէպի ԵԱՏՄ 200-միլիոնանոց շուկայ: Հայաստանը ԵԱՏՄ միակ երկիրն է, որ ունի սահման Իրանի հետ»,- յաւելած է ան: Սոպհանին նշած է, որ նախորդ տարի առեւտրաշրջանառութեան ծաւալը կազմած է 704 միլիոն տոլար:

## Փաշինեան Դեռ Չէ Որոշած, Եթէ Պիտի Մասնակցի Փութինի Երդման Արարողութեան

Փաշինեան դեռ չէ որոշած իր մասնակցութիւնը Փութինի երդմնակալութեան արարողութեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը պիտի մասնակցի՞ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի երդմնակալութեան արարողութեան, թ՞է ոչ, որոշում դեռ չկայ:

«Ազատութեան» հարցումին ի պատասխան Փաշինեան ըսաւ՝ այս պահին չի կրնար ըսել, որոշում դեռ չունի:

Ճշդող հարցումին, թէ ինչէ՞ն կախեալ է որոշումը, վարչապետը պատասխանեց.«Ինչպէս բոլոր որոշումները՝ բազմաթիւ հանգամանքներէ»:

## Կարմիր Խաչի Ներկայացուցիչները Այցելած Են Պաքուի Բանտին Մէջ Պահուող ԼՂ Նախկին Ղեկավարներուն



Կարմիր Խաչի Միջազգային Կազմակերպութեան ներկայացուցիչները Ապրիլին հերթական անգամ այցելած են ատրպէյճանական բանտին մէջ պահուող Լեռնային Ղարաբաղի նախկին բարձրաստիճան պաշտօնեաներուն:

Այդ մասին «ԱՊԱ» ատրպէյճանական լրատուական գործակալութեան փոխանցած է Ատրպէյճանի մէջ ԿԽՄԿ ներկայացուցչութեան հասարակայնութեան հետ կապերու բաժնի ղեկավար Իլահա Հուսէյնովան:

Ըստ անոր՝ ձերբակալուածներուն հետ անհատական հանդիպումներ տեղի ունեցած են, եւ անոնց տրուած է ընտանիքներուն հետ շփուելու հնարաւորութիւն:

## Կառավարութիւնը Աւելի Քան 48 Միլիառ Դրամ Պիտի Յատկացնէ ԼՂ-էն Տեղահանուած Անձերու Աջակցութեան

ՀՀ կառավարութիւնը ընդունած է որոշում, որով կը նախատեսուի Լեռնային Ղարաբաղէն տեղահանուած անձերու 2023 թ. Հոկտեմբերէն մինչեւ 2024 թ. Դեկտեմբերը ներառեալ ընկերային աջակցութեան տրամադրում՝ ամսական 50000 դրամի չափով կամ 10000 դրամի չափով:

Որոշումը ընդունուած է ՀՀ կառավարութեան՝ Ապրիլ 12-ի նիստին:

Շահառու հանդիսացող շուրջ 106000 անձերու 2024 թ. Ապրիլ-Դեկտեմբեր եւ նախորդ ամիսներուն համար աջակցութեան գումարը տրամադրելու համար կ'առաջարկուի համապատասխան փոփոխութիւններ եւ լրացումներ կատարել նախապէս ընդունած որոշման մէջ: Այդ նպատակին համար ՀՀ պետական պիւտճէէն պիտի յատկացքուի 48,477 միլիառ դրամ:

Փոփոխութիւններ եւ լրացումներ կատարուած են նաեւ նախապէս ընդունած որոշումներէն մէկուն մէջ՝ 2023 թ. Սեպտեմբեր 19-էն ԼՂ-էն բռնի տեղահանուած, 2023 թ. Նոյեմբեր 9-ի համապատասխան որոշման շահառու հանդիսացող 4412 անձերու 2023 թուականի Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներու ընկերային աջակցութեան գումարները (ամսական 50000 դրամ) տրամադրելու համար: Այդ նպատակին համար պետական պիւտճէէն պիտի յատկացուի 276 միլիոն դրամ:

## Հայաստանի Մէջ Օգոստոս 3-ը Պիտի Նշուի Եզտիներու Ցեղասպանութեան Օր

Հայաստանի Ազգային Ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջութեամբ ընդունեց Օգոստոս 3-ը որպէս 2014 թուականի Սինճարի եզտիներու ցեղասպանութեան զոհերու յիշատակի օր սահմանելու նախագիծը:

«Հայաստանի Հանրապետութեան տօներու եւ յիշատակի օրերու մասին» օրէնքին մէջ լրացում կատարելու մասին օրէնքի նախագիծը Ազգային Ժողովի արտահերթ նիստին ընդունուեցաւ միաձայն՝ ստանալով 79 կողմ ձայն:

Նախագիծը ներկայացուցած էր իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան՝ ազգութեամբ եզտի պատգամաւոր Ռուստամ Բաքոյեանը:

Արտաքին գործերու փոխնախարար Պարոյր Յովհաննիսեանը յայտնեց կառավարութեան հաւանութիւնը ու ընդգծեց այդ նախաձեռնութեան նշանակութիւնը՝ ցեղասպանութիւններու կանխարգիլման գործին մէջ ու նպաստը՝ հայ եւ եզտի ժողովուրդներու բարեկամական կապերու աւելի ամրապնդման գործին մէջ:

2014 թուականի Օգոստոս 3-ին «Իսլամական Պետութիւն» ահաբեկչական խմբաւորման կողմէ տեղի ունեցած են յարձակումներ եզտիներով բնակեցուած Իրաքի Սինճար քաղաքին վրայ, ուր սպաննած են աւելի քան երեք հազար մարդ: Սովի, ծարաւի եւ անտանելի շոգի հետեւանքով մահացած են լեռներու մէջ ապաստան գտած մօտ հազար մարդ, աւելի քան 200 հազար եզտիներ դարձած են փախստական, առեւանգուած են 13-56 տարեկան շուրջ 5000 կանայք եւ աղջիկներ: Վերջիններուս կեանքի պահպանման նախապայման եղած է իսլամի ընդունումը եւ ամուսնութիւնը ճիհատիստներու հետ:

## Freedom House. ԼՂ-ի Մէջ Ատրպէյճանի Յարձակումը Բացասաբար Ազդած Է Հայաստանի Ժողովրդավարացման Վրայ




«Հայաստանի մէջ 2023-ին ժողովրդավարական կառավարման վարկանիշը նուազած է՝ 2.50-էն հասնելով 2.25-ի: կառավարութեան կողմէ ուժի հաստատման, կեդրոնական իշխանութիւններուն կողմէ ընդդիմադիր քաղաքապետերը պաշտօնանկ ընելու՝ արդէն քանի մը տարիէ շարունակուող միտումներու, եւ իշխող կուսակցութեան ֆինանսական միջոցներու թափանցիկութեան պակասի պատճառով», - կը յայտարարէ հեղինակաւոր Freedom House-ը՝ անցումային երկիրներու մասին նախօրէին հրապարակած զեկոյցին մէջ:

Արձանագրելով, որ 2023-ին Հայաստանը լուրջ դրական բարեփոխումներ կատարած է դատական համակարգի, ոստիկանութեան, փտածութեան դէմ պայքարի, կրթութեան եւ տարածքային կառավարման ոլորտներուն մէջ, զեկոյցը կը նշէ. «Թէեւ որոշ բարեփոխումներ կ'ապահովեն արդիւնաւէտ կարգաւորումներ, անոնք յաճախ չեն հասնիր իրենց նպատակներուն՝ վատ կամ անհետեւողական իրականացման պատճառով»:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնը կը նշէ, որ անցած տարուան հիմնական ներքաղաքական իրադարձութիւնը Երեւանի աւագանիի ընտրութիւններն էին: «Հայաստանի բնակչութեան մէկ երրորդը մայրաքաղաքին մէջ կ'ապրի, եւ այս քուէարկութիւնը կրնայ դիտարկուիլ որպէս վստահութեան քննութիւն՝ 2021-ի արտահերթ եւ 2026-ին նախատեսուած խորհրդարանական ընտրութիւններու արանքին», - կը նշէ Freedom House-ը, յաւելելով՝ դիտորդները հիմնականին մէջ դրական գնահատած են ընտրութիւններու կայացումը, արձանագրելով, որ այն զերծ եղած է ժամանակին տարածուած ընտրակաշառքէն ու ճնշումներէն:

Զեկոյցը կը փաստէ, որ քուէարկութեան մասնակցած է ընտրողներուն 28,5 տոկոսը, ինչ որ «յատուկ բեւեռացուած է հասարակութիւններուն, ուր քաղաքացիները հիասթափուած են յետհեղափոխական վերնախաւի ձախողումներէն, միաժամանակ կը մերժեն նախկին վարչակարգի ներկայացուցիչներուն վերադարձը»:

Զեկոյցը կը նշէ նաեւ, որ Հայաստանի ժողովրդավարացման ջանքերուն վրայ բացասաբար ազդած է Ատրպէյճանի յարձակումը Լեռնային Ղարաբաղի վրայ: «Եւրոմիութիւնն ու Միացեալ Նահանգները ձախողեցան պատասխանատուութեան կանչել Ատրպէյճանը կատարած քայլերուն համար, թէեւ մինչ այդ այդ բնագիրը կարմիր գիծ համարած էին», - կ'ընդգծէ Freedom House-ը:

«Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախայարձակ պատերազմները ամենավառ օրինակներն են այն արհամարհանքին, որ այսօրուան միապետերը կը ցուցաբերեն մարդու հիմնարար իրաւունքներուն եւ ազատ հասարակութիւններուն նկատմամբ», - կը յայտարարէ հեղինակաւոր իրավապաշտպան կազմակերպութիւնը՝ յաւելելով. «Ռուսաստանը եւ Ատրպէյճանը հեգնողաբար կը պահանջեն յարգել իրենց ինքնիշխանութիւնը՝ միեւնոյն ժամանակ մերժելով իրենց հարեւաններուն ինքնավարութիւնը, իւրայատուկ պատմութիւնը եւ գոյութեան իրաւունքը:

## Առաջին Անգամ Հնդկաստանը Հայաստանի Մէջ Ռազմական Կցորդ Նշանակած Է

Առաջին անգամ Հնդկաստանը Հայաստանի մէջ ռազմական կցորդ նշանակած է: Հնդկաստանը ռազմական կցորդներ կ'ուղարկէ նաեւ 10-էն աւելի երկիրներ, այդ շարքին առաջին անգամ Հայաստանի մէջ պիտի նշանակուի ռազմական ներկայացուցիչ:

Շեշտը դրուած է այն պետութիւններուն վրայ, որոնց հետ Հնդկաստանը կը զարգացնէ ռազմատեխնիկական համագործակցութիւնը: Հայաստանի մէջ առաջին անգամ ռազմական կցորդ նշանակուած է, որուն հետ Հնդկաստանը արդէն պայմանաւորուած է Pinaka կայաններու, «Աքաշ» փոքր



հեռահարութեան զենիթահրթիռային համակարգի եւ այլ զինատեսակներու մատակարարման շուրջ:

## Հայաստանի եւ Ատրպէյճանի Միջեւ

Շարունակուած էջ 1-էն

*յարձակ պատերազմ սանձազերծած է Լեռնային Ղարաբաղի հայերուն դէմ, որուն յայտարարուած նպատակն էր վերացնել եւ վտարել հայերը իրենց հայրենիքէն:*

*Եղիշէ Կիրակոսեանը կը մէջբերէ կատարել նաեւ Ատրպէյճանի նախագահ Ալիեւի՝ հետագային ըռւած խօսքերէն, ուր վերջինս նշած էր, որ Թշնամիի (հայերու) նկատմամբ ատելութիւնը ատրպէյճանցիները յառաջ կը շարժէ:*

*«44 օր շարունակ ատրպէյճանցի զինուորները սպաննում, խոշտանգում էին էթնիկ հայերին եւ հպարտօրէն նկարահանւում էին իրենց զոհերի առաջ»,- դատարանին յիշեցուցած է Կիրակոսեան՝ յաւելելով, որ այս բռնութիւնը եւ ահաբեկումը Ատրպէյճանի կողմէ օգտագործուեցաւ ԼՂ-ի հայերը ցեղային զտման ենթարկելու եւ առնուազն 30 հազար հայեր իրենց հայրենիքէն վտարելու համար:*

*ՀՀ ներկայացուցիչը պարզաբանած է, որ այս ամէնէն յետոյ Հայաստանը պատասխան պահանջեց սոյն պայմանագրի ներքոյ եւ դիմեց դատարանին, որպէսզի վերջինս հրատապ պաշտպանէ այն խոցելի հայերը, որոնք դեռեւս չէին սպաննուած եւ չէին վտարուած իրենց հայրենիքէն:*

*Միեւնոյն ժամանակ, ան յաւելած էր «Նոյնիսկ Արդարադատութեան միջազգային դատարանը չկրցաւ կանգնեցնել Ատրպէյճանի ցեղապաշտական քարոզարշաւը, որուն շրջանակին մէջ ցեղային զտում իրականացուեցաւ»:*

*Ան դատարանին յիշեցուցած է, որ Ատրպէյճանը կը ջնջէ Լեռնային Ղարաբաղի հայկական մշակութային ժառանգութիւնը՝ ընդգծելով, որ այս բոլոր հանգամանքները պատճառ հանդիսացած են, որպէսզի Հայաստանը դիմէ դատարան:*

*Անդրադառնալով Ատրպէյճանի ներկայացուցիչին կողմէ նախօրէին կատարուած յայտարարութիւններուն՝ որոնցմով վերջինս փորձած էր հաւասարութեան նշան դնել Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ՝ Կիրակոսեանը այդ անընդունելի համարած է՝ յայտարարելով, որ այդ փորձերը անլուրջ են եւ անամօթ:*

*Ան նաեւ յաւելած է, որ Ատրպէյճանի համար դժուար է ապացոյցներ ներկայացնել դատարանին, քանի որ անոնք ուղղակի գոյութիւն չունին՝ անուանելով զանոնք հաւասարութիւն դնելու յուսահատ փորձ Ատրպէյճանի կողմէ:*

## ԱՄՆ Հայաստանին Պիտի Տրամադրէ

Շարունակուած էջ 1-էն

*քելութեան միանալու հնարաւորութիւնը, ինչպէս այդ ըրաւ Գանատան նախորդ տարի:*

*Քրիսթինա Քվինը տեղեկացուցած է, որ մինչեւ հիմա նման ծրագիր չունին, բայց, ապագային ոչինչ կը բացառուի:*

*Վերջին հարցախոյզերուն համաձայն անվտանգութիւնն է հայաստանցիները ամէնէն շատ յուզող խնդիրը: Ֆրանսան ամրապնդեց ռազմական համագործակցութիւնը Հայաստանի հետ՝ մատակարարելով զինատեսակներ՝ չնայած խոչընդոտներուն: Միացեալ Նահանգները պիտի հետեւի՞ Ֆրանսայի օրինակին:*

*ԱՄՆ դեսպանը այս հարցումին ի պատասխան նշած է, որ իր կարծիքով վերջին մէկ տարուան մէջ այս թեմայով զգալի ընդլայնում ունեցած են: «Ընդամէնը քանի մը օրինակ. անցեալ տարի մենք մեր առաջին համատեղ զօրավարժութիւնը անցուցրինք 2008 թուականէն ի վեր: Կը կարծեմ՝ այդ շատ կարեւոր ազդանշան է, որ Միացեալ Նահանգները եւ Հայաստանը կրնան աշխատիլ իրար հետ պաշտպանական ոլորտին մէջ:*

*«Մենք նաեւ պիտի ունենանք խորհրդական, որ կրնայ գալ եւ նստիլ Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան հետ՝ օգնելու կարողութիւններ»:*

*Այս պահին որեւէ քննարկում չկա՞յ զէնք ու ռազմամթերք մատակարարելու շուրջ՝ հարցումին դեսպանը պատասխանած է. «Իրականութեան մէջ, մենք շարունակական քննարկում ունինք, թէ ինչ կրնայ Հայաստանին անհրաժեշտ ըլլալ ռազմական ոլորտին մէջ: Արդէն պայմանաւորուած ենք մի քանի բանի շուրջ: Այդ պայմանաւորուածութիւններէն մէկ բան կրնամ առանձնացնել՝ Հայաստանը խնդրած էր շտապօգնութեան զրահապատ մեքենաներ, որոնցով անոնք կրնան մտնել հակամարտութեան տարածք, եւ այդ մեքենաներով տեղափոխուող մարդիկ պաշտպանուած պիտի ըլլան:*

*«Մենք արդէն պայմանաւորուած ենք, որ յառաջ պիտի երթանք այս հարցով, եւ այժմ կ'աշխատինք անոր իրագործման ձեւերուն վրայ, որպէսզի կարենանք տրամադրել այդ օգնութիւնը: Եւ, ինչպէս նշեցի, ամենատարբեր թեմաներ կը քննարկենք, եւ կը փորձենք տեսնել, թէ ուր կրնանք օգտակար ըլլալ Հայաստանին՝ անոր պաշտպանութեան առումով»:*

## Պրիւսելի Հանդիպման Արդիւնքները

Շարունակուած էջ 2-էն

*մանափակումների արձանագրումը նշանակում է, որ մօտ ապագայում ամենայն հաւանականութեամբ Երեւանի կողմից արտաքին քաղաքական հարցերում կտրուկ քայլեր դժուար է լինելու ակնկալել: Հայաստանը փորձելու է փոքր քայլերով սերտացնել յարաբերութիւնները Արեւմուտքի հետ՝ միեւնոյն ժամանակ սիմվոլիկ բնոյթի քայլերի եւ որոշումների միջոցով Մոսկուայից քաղաքական կախուածութեան նուազեցման իմիտացիա իրականացնելով: Ըստ ամենայնի, մօտակայ ամիսների ընթացքում կարելի է ակնկալել նաեւ ԵՄ-Հայաստան փոխյարաբերութիւնների հիմքում ընկած պայմանագրային բազայի թարմացում:*

*ԵՄ-Հայաստան փոխգործակցութեան խորացման այս փուլային մօտեցումը բխում է օբիեկտիւ իրողութիւններից, որոնք շատ յաճախ գիտակցաբար անտեսւում են հայաստանեան քաղաքականացուած ու գաղափարականացուած վերլուծական դաշտի կողմից: Այդ իրողութիւնները արտայայտւում են ոչ միայն վերոնշեալ կառուցուածքային խնդիրների տեսքով, այլեւ Արեւմուտքում առկայ ռեսուրսների սղութեան եւ կասկածելի կարեւորութիւն ունեցող տարածաշրջանում յաւելեալ պատասխանատուութիւն ստանձնելու ցանկութեան բացակայութեան տեսքով:*

*«ՍԻՎԻԼՆԵԹ»*

*Սարգսեանի հետ հանդիպումից յետոյ Արա Արշավիրովիչը կարծես մտքափոխ էր եղել:*

*Նա իր փափաքը իրագործեց 2021-ին, կարծես «Մեր տունը Հայաստանն է» անունով կուսակցութիւն էր բացել եւ այժմ երկրից թռած մէկ այլ գործչի՝ նախկին ԲՀԿ-ական Տիգրան Ուրիխանեանի հետ կազմած միասնական ցուցակով մասնակցեց 2021-ի ԱԺ ընտրութիւններին եւ այդպէս էլ չյաղթահարեց խորհրդարան անցնելու անցողիկ շեմը՝ ստանալով քուէների 0,95 տոկոսը:*

*Համաձայնէք, այս տոկոսը խօսուն վկայութիւնն է սիրոյ այն մակարդակի, որը ժողովուրդը ցուցաբերել է «աշխարհի հայերի միութեան նախագահի» եւ նրա պրոյեկտի նկատմամբ:*

*Այնպէս որ, պարոն Աբրահամեանը, եթէ ուզում է օգտակար գործ անել իր ժողովրդի ու հայրենիքի համար, ապա պէտք է սահմանազատուի նրանից ու անկեղծութիւն ունենայ այսուհետ ներկայանալ ոչ թէ ՌԴ հայերի անունից, այլ՝ ՀՀ-ում ՌԴ դեսպանատան կցորդի:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

## «Դաշնակից Երկիրը» Գործակալներ

Շարունակուած էջ 2-էն

*համարւում է «ալամ աշխարհի հայերի միութեան» նախագահ, եւ, ուրեմն, նրա դիրքին ու յարգին պատշաճում է կեանքի կոչել «ալամ աշխարհի» նուաճումն ու դրանց հայկական լինելը ՄԱԿ-ում գրանցելը:*

*Ի դէպ, Աբրահամեանի քարոզչական «դուքանում» ռուս. ակնյայտ են համարել նաեւ այն, որ Փաշինեանը երկրի ամբողջականութեան եւ նրա քաղաքացիների անվտանգութեան ապահովման հետ կապուած հարցերի լուծում չունի եւ նրա իւրաքանչիւր նոր քայլ միայն խորացնում է իրավիճակը: Եւ... դա-դա-դա դա՜մ՝ «միայն ներկայիս կառավարութեան հրաժարականն ու քաղաքական ասպարէզից հեռանալը կարող է հնարաւորութիւն տալ Հայաստանին՝ իր երկիրն ու ժողովրդին սիրող նոր ղեկավարութեան գլխաւորութեամբ, խաղաղութեան, արժանապատիւ կեանքի վերադառնալ եւ վերադարձնել միջազգային հանրութեան կորցրած վստահութիւնը»:*

*Այս պարբերութեան մէջ մեզ առանձնակի դերեց «սիրող» բառը. ոնց գցում-բռնում ենք Ռոբերտ Քոչարեանը, Սերժ Սարգսեանը, ՀՀ իրաւապահներից թռած ու ՌԴ-ում պատսպարուած եւ միայն վերջերս փրկիչների քասթինգին մասնակցած նախկին պաշտօնեաներն ու մասնաւորապէս Արա Աբրահամեանը «երկիրն ու ժողովրդին սիրողների» ցանկում չկան: Եթէ սիրէին, նախ՝ չէին կեղեքի իրենց սիրոյ օբիեկտին, եւ երկրորդ՝ չէին «թռնի» սիրելի օբիեկտից, կ'ապրէնին սիրելիի հետ եւ օտար երկրում խոպանչու կարգավիճակով չէին բնաւորուի:*

*Ի դէպ, Արա Աբրահամեանը 2015-ից ուզում էր քաղաքականութիւն մտնել եւ խոստանում էր ինչ-որ կուսակցութիւն բացել, բայց ոչ թէ իշխանափոխութիւն պահանջելու, այլ՝ պառլամենտ մտնելու համար: Մամուլը գրեց, որ Սերժ*



# Never Again?

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Նախընտրեցինք խորագրի անգլերէն տարբերակը, որովհետեւ հայերէն «երբեք դարձեալ»-ը նոյն նշանակութիւնը պիտի չտար: Հարցական նշանն ալ դրինք, հեգնելու համար այդ արտայայտութիւնը եւ բացայայտելու անոր սնանկութիւնը: Արդարեւ, Մեծ Եղեռնէն ի վեր, մօտ 30 ցեղասպանութիւններ գործուած են, որոնց գրեթէ կէսը անցնող 50 տարիներու ընթացքին: Այսօր, անցնող վեց ամիսներու ընթացքին, «քաղաքակիրթ» աշխարհի աչքերուն առջեւ, աւելի քան 33 հազար պաղեստինցիներ զոհ գացած են անխնայ ռմբակոծութեանց եւ մօտ 1,5 միլիոն տեղահանուած իրենց փլատակներու վերածուած տուներէն: Չենք խօսիր տակաւին աւելի քան հարիւր հազար Արցախահայութեան տեղահանութեան մասին, որ 21րդ դարու մեր Եղեռնն է, ոչ թէ մեռեալներու թիւով, այլ՝ հողային կորուստի: Չենք խօսիր Ուքրանիոյ պատերազմին մասին, որ երկու կողմերուն պատճառած է աւելի քան 800,000 վիրաւորներ ու մեռեալներ եւ տեղանած աւելի քան 8 միլիոն Ուքրանացիներ: Չենք խօսիր նաեւ Եթովպիոյ, Սուտանի, Սուրիոյ, Եմէնի եւ այլ երկիրներու մէջ ընթացող խժդժութեանց, կոտորածներու եւ սովի մասին: Եւ այս բոլորը կը կատարուին «քաղաքակիրթ» աշխարհի աչքերուն առջեւ, չըսելու համար մասամբ ալ անոնց դրդումով: Մեծ պետութեանց խաղերուն զոհ կ՛երթան փոքրերը: Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնն ու անոր Ապահովութեան Խորհուրդը, որոնք կոչուած են առաջքը առնելու այսպիսի կացութեանց, կը խափանեն որեւէ լուծում, որ յարմար չթուիր այս կամ այն պետութեան շահերուն: 2000 թուականէն ի վեր, այդ Խորհորդին վեթօ ունեցող հինգ անդամներէն երեքը՝ ԱՄՆ, Ռուսիա եւ Չինաստան 67 անգամ խափանած են առնուելիք որոշումներ: Այս 67 վեթօներուն մեծ բաժինը միայն Պաղեստինեան եւ Սուրիական հարցերուն գծով եղած է: Պաղեստինեան հարցով՝ ԱՄՆ-ը 15 անգամ: Սուրիական հարցով՝ Ռուսիան 16 անգամ, իսկ Չինաստանն ալ 10 անգամ:

Վերեւ նշած մեր օրինակներէն յստակ կ՛երեւի, որ «արժէքներ», «մարդկային իրաւունքներ» եւ այլ տեսակի բարոյական սկզբունքներ կ՛ոտնակոխուին, երբ այդ կը պահանջեն մեծ պետութեանց շահերը: Անոնք նոյնիսկ չեն վարանած տապալելու ժողովրդավար կառավարութիւններ, որոնք նպատակայարմար չէին իրենց շահերուն եւ կամ ռմբակոծելու փոքրերը, մարդկային իրաւունքներու պաշտպանութեան պիտակին տակ: Այս բոլորը կը պատահին, որովհետեւ աշխարհ կ՛առաջնորդուի լկտի գործնական քաղաքականութեամբ (realpolitik): Այս քաղաքականութեան դրսեւորումներէն էր Թուրքիոյ վարչապետ Էրտողանի ամբաստանութիւնը, որ Իսրայէլ ցեղասպանութիւն կը գործէ Ղազզաի մէջ եւ Իսրայէլի արտգործ նախարարի յիշեցումը Թուրքիոյ, որ ան հայոց ցեղասպանութիւնը գործած էր, իրողութիւն մը՝ որ տակաւին Իսրայէլի պետութիւնը պաշտօնապէս չէ ընդունած: Այս լկտի գործնական քաղաքականութեան կիրարումը նորութիւն մը պէտք չէ ըլլայ մեզի համար: 1600 տարիներ առաջ իսկ, մեր պատմահայր Խորենացիի պատգամած «սահման քաջաց՝ զէնն իւրեանց» խօսքն է, որ տակաւին կը մնայ ի զօրու, հակառակ քաղաքակրթութեան ամէն տեսակի զարգացումներուն:

Այս բոլորի լոյսին տակ, մենք՝ հայերս ի՞նչ հետեւութիւններ կ՛ընենք: Դատելով, մանաւանդ վերջին 30 տարիներու զարգացումներէն, մենք անգամ մը համար եւս կը համոզուինք, որ մեր դաւանած հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը բոլորովին զուրկ է խորքային ընկալումէ: Որ մենք տարուած ենք ինքնախաբէութեամբ: Որ պատրաստ ենք զոհելու մեր ազգային շահերը, յօգուտ մեր անձնական ու հատուածական շահերուն: Այլապէս՝ մեզի ներկայացած ոսկի առիթները չէինք վատնէր: Այլապէս՝ մեր առջեւ ցցուող մարտահրաւէրները կը քննարկէինք իմաստութեամբ, որպէսզի համապատասխան լուծումները յանգէինք: Այլապէս՝ օտարի ձեռքին գործիք չէինք դառնար: Այլապէս՝ իշխանութեան տիրանալու համար զիրար չէինք սպաններ: Այլապէս՝ կը գիտակցէինք ու կը հետեւէինք մեր մեծերու պատգամներուն, որ ինչպէս կրնանք մեր «փոքր ածու»ն դարձեալ մեծացնել: Աւա՜ղ, որ ամէն անգամ երբ առիթը ներկայացած է սրբագրելու անցեալի սխալները, զոհ գացած ենք պատեհապաշտներու սադրանքներուն եւ դարձեալ տուժած:

Ինչո՞ւ համար ցեղասպանութիւնէն ճողոպրած, օտար հողերու վրայ ապաստան գտած եւ հիւղաւաններու մէջ աճած սերունդը պիտի յաջողէր իրեն յաջորդող սերունդներուն յաջողութեան համար զօրաւոր հիմքեր ստեղծել, իսկ շատ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ Արցախեան ազատամարտի յաղթանակ կերտած սերունդը պիտի փճացնէր այդ յաջողութիւնը: Ինչպէ՞ս բացատրել այս դժբախտութիւնը: Արդեօ՞ք աղէտները մեզ վերակենսաւորելու ու միաւորելու գիտակցութեան ու մշակոյթին զարկ կու տան, մինչ յաղթանակները աւարին տիրանալու համար մեղկութեան եւ պառակտութեան կը տանին: Հրատապ հարց մըն է մեր բարձրացուցածը, որ կը կարօտի լուրջ ուսումնասիրութեան, ախտաճանաչման եւ բուժման, որպէսզի սթափինք եւ կասեցնենք այս կործանարար ընթացքը, որուն մէջն ենք ազգովին:



## Արարատ Տարեցներու Տունը Օթեւան է Բազմահարիւր Հայերու



Գալիֆորնիոյ մէջ տարեցնե-րու տուներ շատ կան, բայց Միշըն Հիլզ քաղաքի հայ տարեցներու Տունը (Ararad Home) իր տեսակին մէջ եզակի է: Ան տուն մը ըլլալէ աւելի, համալիր մըն է, որ իր մէջ կը պարբակէ տարբեր մակարդակի յարմարաւէտ բնակարաններ, ճաշարաններ, մատուռ, թանգարան: Բոլորն ալ օժտուած են արդիական յարմարաւէտ սարքաւորումներով:



երախտագիտութիւն է յայտնում իր նախնիներին, որոնք «հայերը այս հողերէն վտարեցին, փրցուցին եւ նետեցին...»:

Դէ, եկէք կողքկողքի դնենք իրարամերժ, հակոտնեայ երկու արտայայտութիւնները: Առաջինի դէպքում, ռուս ընդդիմադիրի ասածը, ինչպէս ասում են «օդի մէջ կրակոց է», վայրկենական ոգեւորութեան արդիւնք, իսկ երկրորդը՝ պետական մտածողութեան արդիւնքում պետականօրէն մտածուած, հաւատարմագրուած բանաւոր փաստաթուղթ: Իսկ ի՞նչ է մնում մեզ անել՝ արդէն սովորական դարձած, լաւագոյնս կազմակերպուած քայլարշաւնե՞ր կազմակերպել ողջ հողագնդի վրայ...:

Հա՜, այո՜, քայլենք, էլի, նորից քայլենք աշխարհով մէկ, Սինգապուրից մինչեւ Անգլիա, Սիտնիյից մինչեւ Արգենտինա, է՜, վե՞րջը..., սրա վերջը չկայ: Սակայն ասել չէ, թէ մենք, էլ չենք քայլելու, քայլելու ենք՝ պաստառների վրայ փոխելով սովորական դարձած «Մենք ժառանգներն ենք 1915ի հայերի ցեղասպանութեան», «Թուրքը պիտի ընդունի հայերի ցեղասպանութիւնը» կոչերը՝ հետեւեալ բառակապակցութիւններով. «Մեր հողերը», «Մեր պահանջատիրութիւնը անժամանցելի է», «Մեր դատի վերջնական յաղթանակ», «Թուրք՝ վերադարձրու մեր ինչքն ու հարստութիւնը »:

Վաթսուն տարուայ «քայլարշաւի» արդիւնքից յետոյ, կարծում եմ, բաւ է, որպէսզի մենք այսօր համոզուածութեամբ ասենք, որ մենք, չնայած գնահատելի ձեռքբերումներին, տեղքայլի մէջ ենք: Բաւական միամիտ պիտի լինել հաւատալու համար, որ Թուրքը կ'ընդունի Ցեղասպանութիւնը: Բայց աշխարհը հո գիտի 20րդ դարի առաջին ցեղասպանութեան մասին, ինքն էլ գիտի, բայց իր եզային յամառութիւնն ու ի ծնէ բութ լինելը նրան թոյլ չեն տալիս դուրս գալ անասունի պատեանից:

Եթէ մինչեւ 1965 թուականը Եղեռնի յիշատակը պահելու եւ սերունդներին փոխանցելու առաջադրանքը ընկած էր Սփիւռքի ուսերին, այդ թուականից յետոյ Հայաստանի ժողովրդի «աչքը բացուեց»: Նա, մինչ այդ, մօտաւոր պատկերացում ունէր միայն 1915ի հայերի կոտորածի մասին՝ էն էլ մեծահասակներից ու «ախպարներից» լսելով:

Այդ յետոյ էր, որ նա իմացաւ, լսեց ու կարդաց Եղեռնի մասին: Իմացաւ, որ մի երկրորդ Հայաստան էլ կայ, եւ որ, Արարատը այդ հողի վրայ է:

Դրա համար էլ մենք պահում ենք Քսանչորսի Խորհուրդը: Սակայն այսօր, միջազգային քաղաքական խմորումների լոյսի տակ, մենք պարտաւոր ենք վերանայել մեր պայքարի ձեւերն ու հնարաւորութիւնները, եւ, ամէնակարեւորը՝ ՀԱՅ ԱԶԳԻ ու ԺՈՂՈՎՐԴԻ նիւթական հնարաւորութիւնները եւ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ:

Դժբախտաբար, մենք ռոմանտիկ, երազային դարում չենք ապրում եւ լաւ էլ հասկանում ենք, որ ամէն ինչ, նոյնիսկ միջազգային չափանիշի հարցեր, շատ անգամ լուծւում են դրամի, փողի միջոցով:

Ի՞նչ իմանաս, գուցէ մի օր, մի ժամանակ, հաշտութեան նպատակային ինչոր ձեւեր գտնուեն մեր երկու երկրների միջեւ (առանց որեւէ երրորդ երկրի միջամտութեան), թէկուզ «դրամ խաղացնելով», սակայն դա տեղի կ'ունենայ այն ժամանակ, երբ կը բաւարարուեն մեր օրինական պահանջները իրաւական գետնի վրայ:

Հերիք է, բաւ է անընդհատ ջարդից ու կոտորածից խօսել, բաւական է լաց լինել մեր հարազատների անթաղ մեռելների վրայ: Արդէն 110 տարի Թուրքը «Տէր» է դարձել մեր նահատակների չէներին, բնակավայրերին, եկեղեցիներին, տներին եւ առօքփառօք վայելում է մեր ժողովրդի ստեղծած հարստութիւնը, մշակոյթը ու բարիքները:

Այո, Թուրքը վայելում է հայի ստեղծածը, որովհետեւ ինքը ընդունակ չէ որեւէ բան յօրինել, ստեղծել: Նա միայն սովոր է թալանել, փախցնել: Եթէ, պատահում է ուժը չի պատում՝ պատրաստ է իրենից ուժեղի առջեւ սողալ, նրա ոտքերը լուանալ, քծնել, ամէն ստորութեան դիմել՝ իր ուզածին հասնելու համար:

Ստորաքարշութիւնը նրա արեան մէջ է: Իսկ այն՝ ինչ արեան մէջ է՝ հնարաւոր չէ դուրս հանել:

Այսօր 45 միլիոն Թուրք լուանում է գերմանացու ոտքերը, այն ազգի, որի մեղսակցութեամբ ու հովանաւորութեամբ, հարիւրտաս տարի առաջ կոտորեց մի ամբողջ ժողովուրդ: Սակայն, աշխարհին հանճարներ պարգեւած գերման ժողովուրդը «խելքի եկաւ» ու համարձակութիւն ունեցաւ ընդունելու հրեայ ժողովրդին բնաջնջելու իր հրեշաւոր մտադրութեան փաստը: Եւ որպէս գործած մեղքի հատուցում՝ միլիարդաւոր դոլարներով, տարիներ շարունակ փորձում է սիրաշահել հրեայ ժողովրդի սիրտը:

Սովորիր էլի, սովորիր քո տիրոջից, մի քիչ մօտեցիր մարդկութեանը, ա՜յ անխիղճ, Անաստուած: Ներողութիւն խնդրիր քո գործած չարիքների համար: Հայը մեծահոգի է, կը ների, բայց չի մոռանայ...:

Էս ո՞ւմ եմ ասում, որպէսզի ներողութիւն խնդրի: Ճիշդ է ասուած. Ներողութիւն խնդրելը ՄԵԾ ազգերին է տրուած: Ախր դու մեծ էլ չես է՜, շատ ես, շա՜տ: Իսկ շատը որակի չափանիշ չէ: Ինչպէս Սեւակը կ'ասէր՝ «Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում»: Իսկ հայը ՄԵԾ է, ՄԵԾ՝ իր ՄԵԾերով, իր խելքով, իր գիտութեամբ, իր դարերի պատմութեամբ, իր մշակոյթով:

Ես հասկանում եմ, դու ՄԵԾեր չես ունեցել, չես էլ ունենայ, որ լսես նրանց ձայնը:

Հլա նայիր քո պատմութեանը, նայիր թէ ով է ստեղծել քո երկիրը, այն դաձրել արուեստի, գիտութեան, ճարտարապետութեան երկիր: Ի՜նչ ասպարէզ, որ ուզես ՀԱՅՆ է ստեղծել:

Ամբողջ աշխարհը գիտի, որ Թուրքական Հանրապետութիւնը ստեղծուել է հայերի ունեցուածքի վրայ: Ո՞ւր են մեր հարստութիւնները, մեր վանքերն ու եկեղեցիները: Դուք ոչ միայն ոչնչացրիք մի ամբողջ ժողովուրդ, այլեւ տէր դարձաք նրա գիտութեանն ու մշակոյթին:

Դրանք պիտի ետ վերադարձնել: Հիմա ժամանակն է պայքարի: Մենք պիտի վերադարձնենք մեր չէներն ու բարեբեր հողերը, որպէսզի այդ հողերի վրայ նոր շունչով, հայի կենարար արիւնով ներկուած հողերի վրայ նոր թափով, նոր ծլարձակումներով բոցավառուի մեր արուեստն ու մշակոյթը:

Ժամանակին մեր մեծ «Եղբոր»՝ Ռուսաստանի վրայ էինք յոյս դրել: Տեսանք, որ չի լինում, չի ստացւում: Հիմա փորձում ենք Արեւմուտքին սիրաշահել: Սպասենք, տեսնենք, թէ դրանից ինչ կը ստացուի:

Երբ Հայաստանը փորձում էր Ռուսաստանին համոզել, որ վերջինս չեղեալ նկատի 1921ին Մոսկուայում կնքած, Հայաստանի համար չափազանց անբարենպաստ ռուսթուրքական պայմանագիրը, Ռուսիոյ Արտաքին Գործերի նախարարութիւնը անհնար էր համարում բեկանել յիշեալ պայմանագիրը:

Իզուր չի ասել հայ մեծանուն գրող ու թատերագիր Գաբրիէլ Սունդուկեանը. «Գելի վիզը ընդուր ա հաստ, որ իր գործերը իրա ձեռով ա անում...»:

Մինչ մենք զբաղուած ենք մեր ազգի ցաւոտ հարցերը «լուծելով», այնտեղ Թուրքը լկտիութեան ու անբարոյ արարքի նորանոր ձեւերով, առաջ է տանում իր՝ արեան մէջ բուն դրած թալանի ու կողոպուտի գործնթացը:

«Գանձախոյզները, գրում է «Մարմարան», որոնք կը քննեն Հայոց Պատրիարքարանին արձանագրութիւնները, կ'երթան նախկին հայաբնակ վայրերը ու քարտէսներով ճշդուած այդ շրջաններուն մէջ ամէն միջոցի կը դիմեն, որպէսզի գանձ գտնեն հողին տակը»:

Իմացանք որ, Թուրքիայի իսլամացած հայերը կամացկամաց վերադառնում են դէպի քրիստոնէութիւն, դէպի իրենց արմատները, ուստի անհրաժեշտ է այդ արեան կանչին պատասխանել գործնական քայլերով, քարոզչութեամբ:

Դրամի միջոցով պիտի բանալ փաստաբանական գրասենեակներ աշխարհի բոլոր ծալքերում՝ ուր որ հայ կայ՝ իրական, կամ կրոնափոխ, եւ նրանց հնարաւորութիւն տալ հաստատուել Հայաստանում:

Այդ հաստատութիւնները պէտք է թրքական, եւրոպական հիմնարկներից, եկեղեցիների գզրոցներից լոյս աշխարհ հանեն հայերի սեփականութեան վերաբերեալ անհրաժեշտ փաստաթղթեր: Եւ այդ ժամանակ միայն՝ Միջազգային դատարանով կարելի է յոյս ունենալ, որ արդարութիւնը կը յաղթանակի:

Այս ամէնի իրականացման ճանապարհին պիտի երեւայ, թէ որքան ենք մենք սիրում մեր պապենական հայրենիքը եւ որքանո՞վ ենք պատրաստ ազգովին նիւթապէս օգտակար հանդիսանալ նրա ազատագրման սուրբ գործին:

Աշխարհի միլիարդատէրերի ցանկում մշտապէս շօշափւում են հայ դրամատէրերի անունները: Միայն զարմանալ կարելի է, թէ ինչո՞ւ նրանք գործնական քայլերի չեն դիմում: Սուրբ նպատակի համար տրուելիք նրանց արքայական նուիրատւութիւնները խանդավառութեամբ կ'ընդունի համայն հայութիւնը: Վստահ եմ, միլիոնաւոր հայորդիներ, ինչպէս ասում են, չունեցած տեղով անգամ յայնօրէն կը բանան իրենց քսակները:

Ինչո՞ւ մեր օրերում էլ չունենանք մի Ալեքսանտր Մանթաշեան կամ 'Գալուստ Կիւլպէնկեան:

Ակամայ յիշեցի նշանաւոր մեծահարուստ դրամատէր Քըրք Գըրգորեանին, որ մահուանից շատ քիչ ժամանակ առաջ հարցրել էր, թէ ո՞րքան կ'արժենայ Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան Հայաստանին վերադարձնելը: Որքան իմ յիշողութիւնը ինձ չի դաւաճանում, նման մի միտք է արտայայտել նաեւ մեծանուն երգիչ Շառլ Ազնաւուրը ու ժամանակին Ալէք Մանուկեանը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA

$ 125,00 (Air Mail) for Canada.

$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ----------------------------------------------------

Address: ------------------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: --------------

Tel :------------------------

Email: -------------------------

# Հանդիպում-Զրոյց Էնվէր Փաշայի Հետ

> «Եթէ մի երեք այդպիսի Մուսա Լեռ
> Լոյս ընկնէր, գործը այլ ընթացք կստանար:
> Ա~խ, Սրբազան, երանի~ ես Մուսա Լեռան գագաթին լինէի»:
>
> **Եոհաննէս Լեփսիուս**

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Յոհաննէս Լեփսիուս, Աստուածային գթառատ սիրոյ կանթեղը վեր պահած, կշտամբանքի գրոյցի նստել փաշաների, խալամ չէյխերի հետ, կրակ խօսքով կանչել նրանց, որ վաղեմի մի ցեղի մարդկանց սպաննում են՝ «Հայ» լինելու, Աստուծոյ խաչուած որդուն պաշտամունք նուիրելու համար: Արեւելքում Քրիստոնէական քաղաքակրթութիւնեն սպաննում, կործանումնրանց երկիրը, որտեղ աշխարհակործան ջրհեղեղից յետոյ մարդկութիւնն էդարձեալ յառնել: Արմէն-Հայ մարդկանց մահուան կարաւաններ կազմած տանում անապատներ, տանում դէպի ստոյգ մահ:

Լեփսիուս, Մարդ, որուն սրտի լարերը բարութեամբ են թրթռել, դաւանել, որ մարդը Աստուծոյ արարումն է: Մարդ՝ որի միտքը, ակները բարութիւն են ճառագել, Մարդ՝Ջատագովը ուրիշ ազգերի մարդկանց ցաւերին արդարութիւնորոնելու:Գերման ազգի Լեփսիուսը հասել անարգ ոճրագործ մարդկանց որջեր, նրանց սրտերին գութ հոսելու, միջնորդելու, աղերսելու- Հայ ցեղի մարդկանց ոչնչացումը դադարեցնելու:

Լեփսիուս, Գերմանացիարեւելագէտ, բողոքական մարդասէր պատուելի,միսիոնար, հասարակական գործիչ:Աստուած, տիեզերական սիրոյ լոյս է վառել նրա լայն ումեծասքանչ հոգում:Ստեղծագործական աշխատանքի վաղ շրջանում ուսումնասիրել է ուսողութիւն ու իմաստասիրութիւն, նրան շնորհուել «Փիլիսոփայական Գիտութիւնների Տօքթորի« գիտական աստիճան: Հայրը Գերմանիայի եզիպտագիտութեան հիմնադիրն էր: Ծնողները ու մեծ ծնողները համբաւաւոր գերդաստաններից են սերել:Յոհաննէսը, տանը հանդիպել է մտաւարոական մարդկանց, ունկնդրել նրանց խօսքը, մասնակցել զրոյցներին:

Մամուլում ընթերցել է Քրիստոնեայ հնագոյն մի ցեղի հանդէպ կատարուած եղեռնագործութիւնների հաղորդումները, որ նրանց բնօրրանում առանց մեղքի մարդ են սպաննում, ցեղ սպաննում,փլում նրանց հաւատքի տները, հրդեհում չէները: Երկար տարիներ զբաղուել է Հայկական Հարցով: Մասնայատուկ ջանասիրութեամբ փորձել է ազդելերիտթուրքական ղեկավարութեան վրայ՝ վերջ տալու հայոց ցեղի բնաջնջմանը: 1916 թուականի «Տեղեկագիր Հայ Ժողովուրդի կացութեան Մասին Թուրքիայում» եւ 1919 թուականի «Գերմանեան եւ Հայաստանը» գրքերովըծախնդրօրէն փաստագրել ուղատապարտելհայերիԵղեռնը, մերկացրել Թուրք կառավարողների հայաջինջ քաղաքականութիւնը եւ նրանում արեւմտեան տէրութիւնների ու մասնաւորապէս Գերմանիայի ունեցած մեղսակցութիւնը: Նրա ուրիշ մի հրատարակութեան՝«Հայ Ժողովուրդի Դէպի Մահ Ճամբան» գրքումամփոփել է հայկական Եղեռնիգլխաւոր ծրագրողներիցմէկի՝ Էնվէր Փաշայի, հետ հանդիպման զրոյցը: Նա այդ տեղեկագիրը գաղտնի է հրատարակել, Թուրքիան Գերմանիայի հետ դաշնակիցը լինելու պատճառով, յանդգնելձրի բաժանել նրա քսանհազար օրինակներ: Նա էր այն Մարդը, որ երկրի դատարանում խօսել Թուրքի կատարած եղեռնագործութեանուզգետնուած ոճրագործ Թալեաթինրանում ունեցած մեղսակցութեան մասին:Յայտարարել, որ գերդաստանից միակ ողջ մնացած նրան սպաննող տղան, այն կատարել է անմեղսունակ հոգեկան վիճակում: «Յանցաւոր չէ» վճռել էին Երդուեալ Ատենակալները, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Սողոմոն Թեհլիրեանին, բարձրաձայն կանչել էին դատաւարութեանը ներկայ մարդիկ:

Ավստրիացի հրեայ ծագումով՝ իմաստուն մտաւորականՖրանց Վէրֆել, իր «ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԸ» մատեանում՝ Արմէն-Հայերի մշակոյթի հրավառութիւնը, նրանց քաջին վայել ազատութեան կռուի կրակիլոյսը վառել, անանձնական սիրով այն տարել աշխարհի մարդկանց սրտերին հոսելու: Լեփսիուսին նկարագրել է որպէս՝ «Հայերի Պահապան Հրեշտակ»: Մատեանում ներառուած է Էնվէրի հետ Լեփսիուսի հանդիպաման զրոյցը:Բնագրինհարազատ մնալով հանդերձ,այն ներկայացնում եմ կրճատ, որոշ շեղումներով ու ամփոփ խմբագրութեամբ:

Լեփսիուսը, թրքական պետութեան «Ներքին Գործերի Նախարարութիւնում» էր, Թալեաթի ամրոցն էր այն: Քայլում էր ուռուցիկ վարագոյրներով ծածկուած անդուռ սենեակների միջանցքով: Նրան առաջնորդում էին Էնվէրի պաշտօնատեղիի ընդունարանառանձնասենեակ:Պատին, երեք անձանց պատկերներով խոշոր նկար էր: Նրա աջ կողմում Նապոլէոնի, ձախ կողմում Ֆրիտրիխ Մեծ-ի մեծ չափերով դիմանկարներն էին, իսկ կեդրոնում... նոյն ինքը՝ Էնվէրի դիմանկարը: Սպասեակը սուրճ էր մատուցել: Լեփսիուսը, նեարդները զգաստացնելու համար անյագ խմել էր անուշ բոյրով, գաւաթներից մեղմ գալարներով շոգի արձակող համեղ սուրճը:

Բեռլինում, Լեփսիուսին նկարագրել էին Էնվէրի արտաքինը: Զարմացել էր տեսնելով այդ Թուրք Մարսը՝ աշխարհի կենաց եւ մահու ուժ թէ իննը անօրէններից մէկը: Ինչքա՜ն փոքրամարմին ու անբարետես էր: Հասկացել էր պատին ամրացուած նկարի իմաստը, որոնք 1 մեթր 60 սանտիմեթրանոց հանճարեղ հերոսներ էին, հակառակ իրենց մարմնական արատների մեծ յաջողութիւնների հասել: Բարձրահասակ տղամարդու տեսք ձգելու համար՝Մարշալական հանդերձները պիկ ու զուսպ գրկել էին նրաիրանը: Կուրծքից կախուած փայլփլուն շքանշանները թեթեւամիտ պատանու ու պճնամոլի տպաւորութիւն թողնում, իսկական «Գնչու պարոն«: Շփոթուած ու ամօթխած պատանու դէմք ունէր, աչքերը թարթում աղջկայ նման, կախ ընկած ուսերը, նեղ կոնքերը անճոռնի տեսք հաղորդում մարմնին:

Լեփսիուսը Էնվէրի հետ զրոյցը սկսել է Գերմանացի մի երկրպագուի ողջոյնը հաղորդելով: Էնվէրը գոհունակ ժպիտով պատասխանել, որ մեծ յարգանք է տածում Գերմանիայի հանդէպ, նրանք աշխարհի ամենազարգացած ժողովուրդն են, այս պատերազմում հրաշալի յաղթանակներ նուաճում:Հակառակ Գերմանիայի հանդէպ արտայայտածհամակրանքի, կոմիտէում ներկայացնում էր ֆրանսիական ուղղութեան կողմնակիցներին:





Լեփսիուսը նրան հաղորդել էր նաեւ, որ իր երկրում հիացողներ ունի եւ որ իրենից աշխարհասասան արարումներ են սպասում: Էնվէրը հպարտութեամբ պատասխանել, որ պատերազմը դժուար է, սակայն Թուրք ժողովուրդը պատրաստ է կատարելու իր առաքելութիւնը:

-Երկրի ներսո՞ւմ էլ, հարցրել է Լեփսիուսը:

Էնվէրը չհասկանալու է տուել նրա հարցումը, հաւաստել, որ Կովկասեան ռազմաճակատում դրութիւնը բարելաւում է: Լեփսիուսը կրկնել, որ երկրի ներսում ասելով նկատի չի ունեցել ռազմաճակատը, այլ՝ երկրի խաղաղ վիլայէթները: Էնվէրը անմտօրէն յարել,որ եթէ երկիրը պատերազմում է, ապա ինչ որ չափով այն ամբողջութեամբ ռազմական գօտու մէջ է գտնւում:

Լեփսիուսը իր այցելութեան նպատակն է յայտնել, որ ինքը ոչ թէ սեփական քմահաճոյքի համար է նախարարից տեսակցութիւն խնդրել, այլ իբրեւ՝ «Գերմանական Արեւելեան Միաբանութեան» նախագահ եւոր պարտաւորութիւն ունի իր միաբանութեանը ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդելայն մասին, ինչ որ կատարուել ու կատարւում է նրանցերկրում:Իր երկրի հանդէպ ունեցած պարտքն է Արտաքին Գործոց Նախարարութեանընաեւ յայտնելու իր այցելութեան մանրամասները եւ որ նոյնիսկ Ռայխկանցլէրն է հետաքրքրւում էդրանով: Վերադարձին,«Հայկական Հարցի» մասին զեկուցելու է Ռայխսդակի պատգամաւորներին ու լրագրողներին: Լեփսիուսը շարունակելով խօսքը, Էնվէրին դիմելով ասել, որ «Նրա աստիճանի մի զօրավար, մի հերոս անձնաւորութիւն չէր անի այն, ինչ որ պատմութեան մէջ կարող է ստուեր գցել նրա անձի վրայ»:

Էնվէրը յարել է, թէ ինք իմացել էր տեսակցութիւն խնդրելու նպատակը՝ «Յայտնի Գործի» վերաբերեալ եւ պատրաստ է ցանկացած տեղեկութիւնտրամադրելու: Շարունակելով խօսքը յարել, որ երկիրը կառավարողները միշտ էլ ցանկացել են Հայ ազգին օժանդակել, նրա հանդէպ լինել արդարամիտ: Հայերը խանդաղատանօք ընդունել են երկրում իրականացուած յեղափոխութիւնը, երդուել հաւատարիմ լինել: Դրժել են իրենց խոստումը,անգիտացել ենք այն, քանի դեռ Օսմանեան ազգը վտանգուած չէր եղել: Պատերազմը սկսելուց յետոյ նրանց ուխտադրժութեան ու դասալքութեան դէպքերը շատացել էին, այն հասելով ապստամբութեան: Ստիպուած են եղել դիմելու փոխադարձ միջոցառումների, այլապէս չէին կարող պատերազմ մղել:

Լեփսիուսը հարցրել՝ինչո՞վ էին ապացուցուել դաւաճանութեան եւ ուխտադրժութեան դէպքերը: Էնվէրընրա հարցումին պատասխանելով, յայտարարել՝ նրանց ունեցած կապերը Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիոյ հետ, խարդաւանքներ, լրտեսութիւն եւ ամէն ինչ որ կարող է անցնել մարդու մտքով: Ռազմական դատարանում տեղի ունեցած դատավարութիւնը, տասներհինգ հոգի մահուան են դատապարտուել՝ երկիրը մասնահատելու ու այնտեղ անկախ պետութիւն հռչակելու համար:

Ըստ երեւոյթին, խօսքը Հնչակեան քսան կախաղանների մասին է, այդ ապիկար, հարիւրապետի զինուորական աստիճանի հմտութիւն ունեցող զօրավարը, նրանց թուի ու նպատակի մասին էլ գաղափար չէր ունեցել: Այդ անարգ, ոճրագործ մարդիկ երկիրը պատերազմի տանելու,եւ իրենց քաղաքացի հազար-հազար մարդկանց տարագրութեան ճամբաներին եւ հեռու անապատներում մահ պատճառելու համար հեռակայ կարգով մահուան պիտի դատապարտուէին: Ահից փախել էին երկրից, վրիժառու արորդիներ գտել նրանց թաքուն որջերը, իրենք իրագործել Թուրքիայի կայսերական դատարանի մահուան վճիռները:

Լեփսիուսը,հակադարձելով նրան,յայտնել, որնրանք պատերազմից առաջ էին ձերբակալուել, իսկ Իսթամպուլում ձերբակալուած մտաւորականների դաւաճանութիւնը ապացուցուա՞ծէ, հարցրել նրան:

Էնվէրը պատասխանել, որ դաշնակից պետութիւնների դէմ մղուած Դարդանել-Կալլիպոլիի ռազմաճակատի պայմաններում չէին կարող հանդուրժել հաւանական դաւաճաններին: Տխմար մարդ, գիտէ՞ր արդեօք բանաստեղծութիւնն ի՞նչ է, մտաւորականի արարումը ի՞նչ է:

Լեփսիուսը պատասխանել, որ իրենց յայտնի են Գերմանական հիւպատոսների զեկուցագրերը, միսիոներների գրառումները, որոնցից շատեր ականատես էին այդ

Շար.ը էջ 16

# Հանդիպում-Զրոյց Էնվէր Փաշայի Հետ

Շարունակուած էջ 15-էն

*գարհուրելի եղեռնագործութիւններին: Շարունակելով իր խօսքը յայտարարել, որ ինքը իմացել է նաեւԹուրքիայում Ամերիկեան դեսպան՝ Մորգընթաուի զեկուցագրերում նկարագրուած երկրում տեղի ունեցած դէպքերի մասին:*

*Մորգընթաուն Հրեայ է՝ կանչել է Էնվէրը, նրանք միշտ պաշտպանել են փոքրամասնութիւններին:*

*Կարեւորը Մորգընթաուն չէ, այլ իրողութիւնը, որըչէք կարող ժխտել, խօսել էր Լեփսիուսը: Հարիւր-հարիւր հազարաւոր մարդիկ տարագրութեան ճամբաներին են, դուք այն գաղթ էք համարում, այն բառի աղաւաղում է: Ինչպէ՞ս կարելի է հողագործների, արհեստաւորների, շէների ու քաղաքաբնակ մարդկանցից ու մտաւոր աշխատանքով զբաղուողներից բաղկացած մի ամբողջ ժողովուրդի տարագրել Միջագետքի անապատներ, ամայի վայրեր, որտեղից նոյնիսկ Բեդուին ցեղերն են խուսափում: Իշխանութիւնները այնպէս են այն իրագործում, որ այդ թշուառները ուժ օրերի ընթացքում ծառաւից, հիւանդութիւններից մեռնում են կամ խելագարւում: Ջինուորականները, քրտերը ու աւազակները սպաննում են պաշտպանունակ տղամարդկանց, իսկ աղջիկներին ու կանանց բռնաբարում, արեւանգում:*

*Ցաւալի է պատասխանել է Էնվէրը, սակայն պետութիւնը պարտաւոր է ապահովել երկրի ռազմաճակատային զօտու ապահովութիւնը:*

*Ռազմաճակատային զօտի՞, կանչել է Լեփսիուսը:Այդ նոր նրբերանգ է: Մնացած բոլորն էլ՝ Զէյթունը, պետական դաւաճանութիւնը, դաւադրութիւնները, լրտեսութիւնը ասուած բաներ են: Սուլթան Ապտիւլ Համիտը վարպետօրէն էրայն գործադրել: Երբ խորհում եմ տարագրութեան մասին, անճարակի մէկն էր նա: Ձեր կուսակցութիւնը իշխանութեան է տիրացել այն բանի համար, որ ցանկացել նրա արիւնալի ժամանակաշրջանը փոխել արդարութեամբ, միաբանութեամբ, առաջդիմութեամբ,որով կոչուած է Ձեր կոմիտէի անունը:*

*Էնվէրն հակադարձելով նրան, պատասխանել՝ եթէ Գերմանիան, թէկուզ այլ պայմաններում լինէր եւ տուեալ դէպքի նման ունենար շատ թշնամիներ, պատերազմող ձերերկիրը չէ՞ր գործադրի ամէն միջոց ներքին թշնամուց ազատուելու համար: Այն ժամանա՞կ էլ գարհուրելի կը համարէիք այն եւ բնակչութեան վտանգաւոր մի մասն էլ անմարդաբնակ վայրեր չէ՞իք տարագրի:*

*Լեփսիուսը. բարձրաձայն կանչել՝ եթէ տարբեր համոզումներ ունեցող հայրենակիցների հանդէպ Ձեր նման վարուէին, իսկոյն կը հրաժարուէի Գերմանիայից ու կը հեռանայի Ամերիկա:*

*-Ձեր նման մտածող ժողովուրդը զուրկ է ազգային կամքը առաջ տանող ուժականութիւնից, պատասխանել է նա:*

*Էնվէրի հետ վարած զրոյցի հոգեկան խռովքիտառապանքից մտամոլոր էր դարձել Պատուելին,գրպանից ինքնաբերաբար հանելթաշկինակը, այն վեր պահել, կարծես հանդէս էրգալու որպէս բանագնաց: Բացականչել որՁեր կատարածը ներքին թշնամուց պաշտպանուածութիւնը չէ, այլ՝ ուխրչ ազգի մարդկանց բնաջնջումն է:*

*Լեփսիուսը շարունակելով խօսքը, յայտարարել, որհամարձակւում է Նորին Վսեմութեան ուշադրութիւնը հրաւիրել որոշ անբարենպաստ հանգամանքների վրայ: Թրքական կայսրութիւնը առանց Հայ ժողովուրդի կորած է՝ տնտեսապէս, մշակոյթապէս, հետեւաբար նաեւ ռազմական տեսակէտով: Խօսքը նաեւ առեւտրի մասին է, որի իննսուն առ հարիւրը գտնւում է քրիստոնեաների ձեռքին եւ որ ապրանքների ներմուծումը կատարւում է հայկական առեւտրական ընկերութիւնների միջոցով եւ երկիրը հումքով ապահովելու գործը նաեւ նրանք են իրականացնում: Նրանցից յիշատակութեան արժանի է Աւետիս Բագրատեանի յետնորդների աշխարհահռչակ առեւտրական տունը, որը Եւրոպայի բազում քաղաքներում մասնաճիւղեր ունի: Ինքս, երկրի ներսում կատարած շրջագայութեան ժամանակ նկատել եմ, որ Անատոլիայի գիւղատնտեսութիւնը վարող հայերի եւ Թուրք ազգխակաւաթիւ գիւղացիների միջեւ հսկայական տարբերութիւն կայ: Թուրքերը, ոչ միայն տասնեակ հազարների ատանացիներին ջարդեցին, այլեւ ոչնչացրեցին նրանց կալսիչ մեքենաները ու շոգեգութանները: Հայ ժողովուրդը, Օսմանեան բնակչութեան ամենակիրթ ու ամենագործունեան է, նրա գործադրած հարիւրամեակների ջանքերը երկիրը դուրս են բերել բնատնտեսական վիճակից, նրան տարել ժամանակակից հողագործութեան ու արդիւնաբերութեան դէպի նոր ժամանակներ: Այդ օրհնեալ աշխատանքի համար նա ոչնչացւում է, դառնում տէրերի վրիժառութեան զոհը:*

*Լեփսիուսը խօսքը շարունակելով նրան դիմել՝ հնարաւոր է երկրի ներսի Հայ արհեստաւորներին, ջուլհակներին, արդիւնաբերողներին փոխարինել Թուրքերով: Սակայն, ո՞վ կփոխարինէր Եւրոպաուսում առած բազմաթիւ Հայ բժիշկներին, որոնք հոգատարութեամբ բուժել են նաեւ օսմանցիներին: Ո՞վ կփոխարինէր բազմաթիւ ճարտարապետներին, փաստաբաններին, ուսուցիչներին, որոնց աշխատանքի շնորհիւ երկիրն առաջդիմում է: Կարող էք պնդե՛լ, որ կարո՛ղ էք գոյատեւել առանց մտաւոր մարդկանց ջանքերի, սակայն, մարդ չի կարող ապրել առանց ստամոքսի, կտրատում էք երկրի ստամոքսը, ակնկալելով,որ վիրահատութիւնը յաջող կանցնէր:*

*Էնվէրը յարգանքով էր լսել Լեփսիուսի խօսքը, սակայն նրա դէմքի արտայայտութիւնում ոչ մի խորհուրդի ծալքի ստուեր իջել, ինչպէս նրա մարմինը պինդ գրկած համազգեստի վրայ: Կերպարանափոխուել էր Միսիոնար Պատուելին, իր խօսքի արթնած հոգեկան յուզմունքից, բիւրեղիկների ջինջ հատիկների նման քրտինքն էր իջել դէմքին, առուակների նման հոսել դէմքի նուրբ կնճիռներից, անձկութիւնից փողկապն է մի կողմ հրել, բաժկոնի թեւքերը վեր քաշել:*

*-Ի՞նչ արած, յարել էր Էնվէրը,Թուրքիան պատերազմից յետոյ տկար ստամոքս կունենայ: Թուրքիայում քառասուն միլիոն Թուրք ժողովուրդ կայ, արդեօք քաղաքական մեծ ծրագիր չէ՞ր լինի այդ քառասուն միլիոնը համախմբել, ազգային պետութիւն հիմնել, որը Ասիայում նոյն դերը կկատարէր ինչոր Գերմանիան Եւրոպայում: Հայերի մէջ սոսկալի շատ մտաւորականներ կան, եթէ դուք կողմնակից էք այդ կարգի մտաւորականներին, ես ոչ: Թուրքերը նման մտաւորականներ քիչ ունեն, սակայն դրա փոխարէն հին ու հերոսական ցեղ են, որը կոչուած է մեծ կայսրութիւն հիմնել, որի հմար խոչընդոտներյաղթահարելով պէտք է բարձրանանք:*

*Ոչ մի բառ է արտասանել Լեփսիուսը, նրա խօսքից ջղաձգուել, ձեռքերը սեղմել: Այդ փոքրիկ գլուխը այնպիսի թուեր է ասել, որից իրազեկ որեւէ մարդ պիտի ապշէր: Նա գիտէր, որ Անատոլիայում հազիւ թէ զտարիւն Թուրք լինէր: Եթէ հիւսիսային Պարսկաստանի, Կովկասի, Թուրքեստանի բոլոր վրանաբնակ ժողովուրդները եւ Եւրոպայի կէսի չափը գրաւող տափաստանների թափառող ձիագողերը միասին հաշուէին հազիւ քսան միլիոն կը լինէին: Նրա այդ երազանքը՝ ազգամոլութեան թմրադեղի արդիւնք էր:*

*Լեփսիուսը, զգալով իրադրութեան ծանրութիւնը, շարունակել՝ կայսրութի՞ւն էք ուզում հիմնել,սակայն, նրա պատերի տակ մնալու է Հայ ժողովուրդի դիակը: Արդեօք այժմ հնարաւո՞ր չէ, խաղաղ ճանապարհ որոնել:*

*Էնվէրը, իրենց կոմիտէի ճշմարտութիւնը բացայայտելով, դադարել ամօթխածութեամբ ժպտալ, մանր աչքերը հեռուն սեւեռել, պաղ ստուեր իջել աչքերի ցանցաթաղանթներին, զայրոյթով կանչել՝*

*-Մարդու եւ ժանտախտի ժահրերը բարեկամներ չեն կարող լինել:*

*Լեփսիուսը ընդհատել է նրա ահաւոր դժնդակ խօսքը, անմիջապէս յարել, որ նա խոստովանում է իրենց մտադրութիւնը՝ պատերազմի վիճակը օգտագործելով բնաջնջելու ամբողջ Հայ ժողովուրդը:*

*Էնվէրը զգալով, որ իր խօսքը հեռուներ էր տարել իրեն, փոխել է խօսակցութեան եղանակը, սկսել նորէն կեղծ բարեացակամութեամբ հանդէս գալ, յայտարարել,որ իր անձնական այդ կարծիքը ու մտադրութիւնը արտացոլուած են նաեւ կառավարութեան հրապարակած պետական պաշտօնական հաղորդագրութիւնում:Պատերազմը ուինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը հարկադրում են կառավարութեանը օրէնքի ամբողջ խստութեամբ պատժել այն քաղաքացիներին, որոնք ձգտում են կործանել պետութիւնը:*

*Լեփսիուսը ձեռքերը սեղմել էր լայն, գեղեցիկ ու խոհուն վսեմ ճակատին, շարունակել խօսքը, որ առանձին մարդկանց ու պարզապէս քաղաքականութեան պատճառով չի կարելի դատապարտել մի ամբողջ ժողովուրդի, եւ կանանց ու երեխաներին, մանուկներին, ամենայ գազանային մահուան ենթարկել, միքաղաքականութիւն, որից նրանք ոչինչ են հասկանում: Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրումձեր իսկ ժողովուրդի ու նրա ապագայի վրայ: Պատերազմը կաւարտուի, Թուրքիան հաշտութիւն կնքելու անհրաժեշտութիւն կունենայ: Եթէ այն ձախորդ լինէր, այն ժամանակ ի՞նչ կը լինէր: Իր ժողովուրդի հանդէպ պատասխանատուութիւն կրող առաջնորդը պէտք է հոգայ իր անելիքի մասին: Բանակցութիւնների ատեն ի՞նչ վիճակի մէջ կլինէր հաշտութեան Օսմանեան յանձնաժողովը, եթէ նրան հարցնէին՝ «Ո՞ւր է քու եղբայր Աբելը«: Յաղթանակած տէրութիւնները, թշնամու կատարած յանցանքի համար կբաժանէին յաղթանակի աւարը: Այն ժամ, պատասխանատուութիւնը իր վրայ վերցրած ժողովուրդի մեծագոյն մարդը, ամենազօր մարդ Էնվէր Փաշան ի՞նչպէս էր արդարանալու իր ժողովուրդի առաջ:*

*-Ով որ քաղաքականութեան ասպարէզ է մտնում, երկու առանձնայատկութիւն պիտի ունենայ՝ արհամարանք մահուան նկատմամբ եւ անսասան հաւատք սեփական որոշումների հանդէպ, ասել էր Էնվէրը:*

*Լեփսիուսը, ձեռքերը կուրծքին խաչած, ոտքի կանգնեց: Հայ ժողովուրդի Աստուածառաք պահապան հրեշտակը, այլայլուել էր զրոյցի խռովքից, գրպանից կախուել թաշկինակը, անդրավարտիքը ծնկերին իջել, փողկապը լրիւ ծռուել վերնաշապիկի մի կողմի վրայ, ակնոցի ապակիներն էին պղտորուել աչքերից ծորած արցունքի անտես հատիկներից:*

*Խռովայոյզ Պատուելին խոնարհուել է Թուրք Էնվէր Փաշայի առաջ, աղաչել նրան բաւականանալ մինչեւ հիմա կատարուածով, չշարունակել պատժել գոյութիւն չունեցող մի թշնամու: Արեւելքի ճամբաներին հարիւր հազարաւոր մարդիկ մեռնում են: Հրամայեցէք, որ տարագրութեան նոր կարգադրութիւնները չկատարուեն: Բոլոր գաւառները, վիլայէթները դեռ դատարկուած չեն: Ասացէ՛ք բաւական է, երբ Գերմանիա վերադառնամ կփառաւորեմ Ձեր անունը:*

*-Դուք գերագնահատում էք իմ իրաւասութիւնների աստիճանը Պարոն Լեփսիուս, ասել էր Էնվէրը, կառավարութեան նման որոշումների կիրառումը տնօրինում է Ներքին Գործերի Նախարարութիւնը:*

*- Որոշումները կիրառում են ոչ նախարարը, ոչ Մութեսարըֆը, այլ՝ անսիրտ, բիրտ ստորադասները, կրտսեր ենթասպաները, պատասխանել էր Լեփսիուսը: Մի՞թէ Ձեր եւ նախարարի կամքն է, որ ճամբաներին փռուած կանայք մտրակներով առաջ քշուեն, երկիրն ապականի նեխած դիակներից, Եփրատը մեռելներով լցուի, նրա ջրերը բարձրանան:*

*-Գնահատում եմ Ձեր գիտելիքները երկրի ներքին գործերի մասին յարել է Էնվէրը, բաւականութեամբ կընդունեմ այս գործի կարգաւորմանը նպաստող Ձեր գրաւոր առարկութիւնները, կստուգեմ այն:*

*Լեփսիուսը, ենթագիտակցութեան արթնած մղումով առաջ է պարզել թեւերը, ուրախ կանչել, որ իրե՞ն ուղարկէին այդ գործը ստուգելու եւ որ իրարած նման խնդրանք նոյնիսկ սուլթանը մերժած չի եղել: Շարունակել, որ իրեն լիազօրէին կազմակերպելու տարագիրների կարաւանները: Աստուած իրեն ուժ կը շնորհէր, ոչ մի ղրուշ չէր պահանջի կառավարութիւնից, դրամական բոլոր միջոցները ինք կը հայթաթէր, գերմանական ու ամերիկեան ընկերութիւնները այն իրեն կտրամադրէ-*

Շար.ը էջ 18

## Ժամանակակից Արուեստի Տարբեր Դրսեւորումները՝ Մէկ Յարկի Տակ. «ArtKvartal»-Ը Ցուցահանդէսով եւ Համերգով Նշեց Տարեդարձը



Աւելի քան երեք տարի «ArtKvartal»-ն իր շուրջ է համախմբել ինտուգիաստ ստեղծագործողների՝ ժամանակակից արուեստի տարբեր ճիւղերում աշխատող նկարիչների, որոնք կարողանում են ստեղծել նորը, հետաքրքիրը, երբեմն՝ աներեւակայելին ու զարմացնել թէ՛ մտքի թռիչքով, թէ՛ ստեղծագործական բազմազանութեամբ:

«ArtKvartal»-ի ստեղծագործական թիմը, որը երբեք հանգիստ չի նստում տեղում, միշտ աշխատում է եւ արարում, արուեստի իրենց սիրելի կեդրոնի տարեդարձը տօնեց «In Time» խորագրով ցուցահանդէսով, որն աւելի հարստացաւ «Կաթիլ» խմբի կատարումներով:

«Արմենպրես»-ի թղթակցի հետ զրոյցում երիտասարդ նկարիչ, «ArtKvartal»-ի համահիմնադիր Յարութ Հովհարը պատմում է՝ Պուշկին 4 հասցէի շէնքը, որում «ArtKvartal»-ն է, պատմամշակութային յուշարձան է, իսկ ցուցահանդէսում ընդգրկուած աշխատանքները ներկայացուած են ոչ միայն ցուցասրահում, այլեւ շէնքի մառանում: Այն կառուցուել է 1860-ական թուականներին. Երեւանի ամենահին մառաններից է: Մառանում եղել է «Նոյ» եւ «Արարատ» գինու եւ կոնիակի գործարանների պահեստը եւ մի սենեակ, որը ծառայել է որպէս լաբորատորիա:

Յարութ Հովհարի խօսքով՝ արուեստագէտները ոչ միայն ստեղծագործում, այլեւ ապրում են «ArtKvartal»-ում, որտեղ նաեւ «Բաբելոն» թատրոնն է գործում:

«Երեք տարի առաջ ես, Սերօ Սողոմոնեանը, Անի Զօփուրեանը որոշեցինք համատեղ ուժերով կեանքի կոչել այս մշակութային նախագիծը: Այստեղ ներկայացուած է հայ ժամանակակից արուեստը: Իրականացւում են արուեստի պատմութեան դասախօսութիւններ, արտ թերապիաներ: Մենք անդադար աշխատում ենք մշակոյթի տարբեր ուղղութիւններով եւ ամիսը երկու անգամ ցուցադրութիւններ ենք կազմակերպում»,-նշում է նկարիչն ու յաւելում՝ իրենք առաջնորդւում են հետեւեալ սկզբունքով՝ իրաւունք ունեն չօգնել ինչ-որ մէկին, ինչ-որ մէկին խանգարելու իրաւունք եւս չունեն:

Տօնական «In Time» ցուցահանդէսում ընդգրկուած են տասնմէկ նկարչի աշխատանքներ՝ ինստալիացիաներ, լուսանկարներ, քանդակներ եւ այլն: Եթէ մասնագէտ չէք ու փորձում էք հասկանալ, թէ ինչ է ասել հեղինակը, տարբեր պատասխաններ կարող էք գտնել, իսկ երբ հեղինակն ինքն է մեկնաբանում իր ստեղծագործութիւնը, զարմացնում է խորաթափանցութեամբ:

Յարութ Հովհարն ու Սմբատ Մանուկեանը ցուցադրութեանը համատեղ ինստալիացիա են ներկայացրել:

«Այս աշխատանքն այն է, ինչի մասին ցանկանում է խօսել իւրաքանչիւրը: Ինձ համար սա կնոջ եւ տղամարդու հանդիպումն է, նրանց շփումը»,-շեշտում է Հովհարը:

Ցուցահանդէսը համակարգել է Սերօ Սողոմոնեանը, որը նշում է՝ ցուցադրութիւնը յստակ ժանրային ուղղուածութիւն չունի:

«Մեր ժամանակներում համադրելն այնքան էլ հեշտ աշխատանք չէ, մանաւանդ մեր պարագայում, երբ գործ ունենք տարբեր ժանրերում, տարբեր տեխնիկաներով աշխատող արտիստների հետ, բայց կարեւոր են կոնցեպտը, ինտուգիազմը, արարելու ցանկութիւնը»,-ասում է նա:

Սողոմոնեանը ցուցադրութիւնը բնութագրում է որպէս կեանքի, հոգու, հայ ժամանակակից արուեստի եղափոխութիւն: Ըստ նրա՝ տարիների ընթացքում իրենք ապացուցել են, որ հայ ժամանակակից կերպարուեստը կայ, գնալով զարգանում է եւ մրցակցային է:

«ArtKvartal»-ի համար աւանդոյթ է դարձել իր տարեդարձները «Կաթիլ» խմբի հետ տօնելը, խումբ, որը հայկական երգերի ինքնատիպ մեկնաբանութիւններով գրաւում է ոչ միայն հայ, այլեւ օտար արուեստասէրների ուշադրութիւնը:

«Կաթիլ»-ի վոկալիստ, կիթառահար Սեւադա Համբարչեանն ասում է՝ յաճախ է եկել Պուշկի 4 հասցէ, երբ այդտեղ դեռ միայն Յարութ Հովհարի արուեստանոցն էր: Փոքր համերգներ են կազմակերպել տարածքում, յետոյ աւելի

Շար.ը էջ 18

## Հայաստանի Պատմութեան Թանգարանի Ցուցանմուշները Ներկայացուած են Վենետիկի Դոժերի Պալատում Բացուած Ցուցահանդէսում



Հայաստանի պատմութեան թանգարանի 32 ուշագրաւ ցուցանմուշներ ներկայացուած են Վենետիկի հեղինակաւոր թանգարաններից մէկում՝ Դոժերի պալատում բացուած «Մարկո Պոլոյի աշխարհները. 13-րդ դարի վենետիկեան վաճառականի ճանապարհորդութիւնը» խորագրով միջազգային ցուցահանդէսում:

Ցուցահանդէսը նուիրուած է իտալացի յայտնի ճանապարհորդ, վաճառական Մարկօ Պոլոյի մահուան 700-ամեայ տարելիցին:

տը պատկերող ոսկեթել հիւսուածքով մետաքսէ գործուածքի պատառիկը, Անիից եւ Դուինից պեղուած տարբեր գեղազարդումներով եւ պատկերներով ջնարակապատ ափսեներ, անօթներ, գաւաթներ, ապակէ հետաքրքիր նմուշներ, Սպիտակաւոր եկեղեցուց իշխան Ամիր Հասանի որսի տեսարանով բարձրաքանդակը, Կիլիկեան Հայաստանի Լեւոն II եւ Լեւոն III արքաների արծաթեայ դրամները եւ այլ խորհրդանշական նմուշներ:



Ցուցահանդէսի շրջանակում աւելի քան 300 ցուցանմուշներ են համադրուել Հայաստանից, Իտալիայից, Յունաստանից, Գերմանիայից, Սպանիայից, Դանիայից, Չինաստանից, Քաթարից եւ այլ երկրներից: Հայաստանի պատմութեան թանգարանի հաւաքածուից ցուցադրուած են այնպիսի հոյակերտ նմուշներ, ինչպիսիք են՝ Անիից պեղուած 13-րդ դգ փայտեայ փորագրազարդ գրակալներից մէկը, վագրի եւ հովազի մենամար-

Ցուցանմուշներն ուղեկցւում են «Երկու Հայաստանները եւ Մարկօ Պոլոյի մուտքը Ասիա» եւ «Հայաստան՝ արքայի, գործուածքի, առեւտրի եւ մշակոյթի երկիր» խորագրերով բացատրական տեքստերով ու քարտէզներով, որոնք հնարաւորութիւն են տալիս այցելուներին ճանապարհորդելու Մարկօ Պոլոյի ժամանակների միջնադարեան հայկական աշխարհով:

Ցուցահանդէսը գործելու է մինչեւ 2024 թ. Սեպտեմբերի 29-ը:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

www.massispost.com

## Սահակ-Մեսրոպ Վարժարանի

Շարունակուած էջ 8-էն

*ծափահարութեանց:*

*Ներկաներուն համար հաճելի անակնկալ մըն էր վաստակաւոր ուսուցիչներու պարգեւատրումը: Առաջին հերթին պարգեւատրուեցան Ռաֆֆի Ղազարեան 15 տարուան ծառայութիւն, ապա Լարա Գօզաքեան 20 տարի, այնուհետեւ դպրոցի վաստկաշատ մանկավարժ եւ սիրուած տնօրէնուհի Տիկին Մարալ Պօյաճեանը իր քառորդ դարու հարուստ փորձառութեան համար:*

*Իր փակման խօսքին մէջ Տիկին Մարալ Պօյաճեան սրտագին շնորհակալութիւններ յայտնեց դպրոցի Խնամակալ Մարմնին, ուսուցչական կազմին պաշտօնէութեան ու բարերարներուն, որոնք իրենց օգտաշատ ներդրումն ունին ի սպաս Սահակ-Մեսրոպ վարժարանի վերելքին եւ խոստացաւ շարունակել մեծ նուիրումով ի սպաս մեր մատղաշ սերունդին:*

*Սոյն յիշարժան երեկոն իր աւարտին հասաւ Վեր. Ռիչի Աւշարեանի եւ Արժ. Տ. Պօղոս Քհնյ. Պալթայեանի աղօթքով:*

*Բարի երթ Սահակ-Մեսրոպ Վարժարանին:*

## Հանդիպում-Զրոյց Էնվէր Փաշայի Հետ

Շարունակուած էջ 16-էն

*ին: Նախկինում նման աշխատանք ինք կատարած է եղել, հիմնել որբանոցներ, հիւանդանոցներ: Հակառակ պատերազմական վիճակի, կարող էր այն իրականացնել եւ որ անձամբ ինքը իրենից շնորհակալ կլինէր:*

*Էնվէրը լարուածութեամբ էր ունկնդրել պատուելիին: Փոխուել էր նրա պատանեկան անմիտ դէմքի արտայայտութիւնը, յարգալից պատասխանել, որ Լեֆսիուսի դիտաւորութիւնները հետաքրքրել են իրեն, սակայն մերժում է: Աւելացրել,որնրա ցանկութիւնը ցոյց է տալիս, մինչեւ այժմ սխալ էին միմեանց հասկացել: Եթէ ինքը մի օտարականի արտօնէր, որ հայերին օգնութիւն ցոյց տար, ապա այն կարծիքը կստեղծուէր, որ ընդունում է այլազգի անձանց, հետեւաբար նաեւ արտասահմանեան պետութիւնների միջամտութիւնը: Այդ դէպքում, կը խախտէին իրենց քաղաքականութեան հիմքերը, քաղաքականութիւն, որ Հայ ժողովուրդին կը սովորեցնէր ինչի էր յանգում օտար միջամտութեան կարօտը: Եւ որ ինքը պատժում էր պետական դաւաճանութեան վրայ հիմնուած նրանց երազանքը, յոյսերը,եթէ ինք նրանց մօտ ուղարկելու լինէր նրանց ազդեցիկ բարեկամներին, կրկին կեանքի կը կոչուէին նրանց երազանքները: Ո՛չ, Պարոն Լեփսիուս, աւելացրել էր Էնվէրը, այդ անհնարին է, չենք կարող թոյլ տալ ոչ մի օտարերկրացի նրանց բարեգործութիւն անէր, հայերը մե՛զ պէտք տեսնէին որպէս իրենց բարեգործների:*

*Լեփսիուսը ամէն ինչ կորած է համարել, յուսահատ փլուել էր աթոռին, խօսելն արդէն աւելորդ համարել: Յուսակտուր նայել մանկամիտ նայուածքով այդ անողորմ ժողովրդասպան մարդուն: Պատուելին խորասուզուել էր խոր մտածմունքների մէջ, անմիջապէս չէր ըմբռնել Էնվէրի ամբողջ լկտիութեամբ արած առաջարկը:*

*Էնվէրը շարունակել, որ ինքն էլ մի առաջարկ ունէր՝ դրամ հաւաքէք, որքան կարող էք շա՛տ դրամ հաւաքեցէք Ձեր նշած ընկերութիւնների միջոցով, այն բե՛րէք ինձ մօտ, այն կ՚օգտագործէի համաձայն Պարոն Լեփսիուսի գաղափարների ու ցանկութիւնների, սակայն երբեք չէի հանդուրժի ոչ մի օտարերկրացու միջամտութիւնը, աւելացրել է նա:*

*Լեփսիուսին գաւեշտական էր թուացել Էնվէրի առաջարկը, որ իր հաւաքած դրամը Թուրքիա պիտի մտնէր: Պատուելին լռել էր, ջախջախուած էր, թէեւ զրոյցից առաջ էլ մեծ յոյսեր չէր կապել Էնվէրի հետ հանդիպումից՝*

*ՀԱՍԿԱՑԵԼ Է, ՈՐ ԱՇԽԱՐՀԸ ՓՈՒԼ Է ԵԿԵԼ . . .*

## Ժամանակակից Արուեստի

Շարունակուած էջ 17-էն

*ընդլայնել են գործունէութիւնը:*

*«Յոյս ունենք, որ աւելի կամրապնդուի նկարիչների, երաժիշտների, այն խմբերի միջեւ կապը, որոնք հենց նկարիչների հոգեբանութեամբ են ստեղծագործում, այսինքն՝ անկախ են, ազատ, իրենց ստեղծագործական ուղին ունեն: Ինչպէս ամէն տեղ, այնպէս էլ արուեստում կը յաղթի միասնականութիւնը»,-հաւաստիացնում է Սեւադան:*

*«ArtKvartal»-ի տարեդարձը տօնելու էին եկել նկարիչներ, գրողներ, երաժիշտներ, մշակոյթի այլ ոլորտների ներկայացուցիչներ, արուեստասէրներ եւ պարզապէս հետաքրքրասէրներ: Բոլորն անհամբերութեամբ էին սպասում ցուցանմուշներն ուսումնասիրելուն եւ համերգն ունկնդրելուն:*

*Հիւրերից էր Հայաստանի նկարիչների միութեան նախագահ Սուրէն Սաֆարեանը:*

*«Շատ հետաքրքիր ցուցահանդէս է: Այստեղ միշտ նոր մօտեցումներ, նոր գաղափարներ է հնարաւոր գտնել: Շատ եմ կարեւորում մեր քաղաքում «ArtKvartal»-ի տեղը, դերը, ճանաչում եմ այս գողտրիկ վայրի հիմնադիրներին, որոնք անում են ամէն ինչ, որ մեր ժամանակակից արուեստն ամուր ու հաստատուն քայլերով առաջ գնայ»,-ընդգծում է Սաֆարեանն ու շնորհաւորում ստեղծագործական թիմին, մաղթում, որ արուեստի օճախն ընդլայնուի, քանի որ արուեստասէրը նման միջավայրում զգում է իրական արուեստն ու ժամանակը:*

*«ArtKvartal»-ի հիմնադիրները հաւաստիացնում են՝ այն արուեստասէրները, որոնք մէկ անգամ այցելում են իրենց, անպայման վերադառնում են ծանօթների, այլ արուեստասէրների ու արուեստագէտների ընկերակցութեամբ: Հիմնադիրները չունեն աջակիցներ եւ չեն ցանկանում շատ բարձրաձայնել իրենց մասին: Կարծում են՝ պետութիւնն այժմ իրենց օգնութեան կարիքն ունի, ուստի պէտք է անեն հնարաւորը՝ նրա կողքին լինելու համար:*

*ԱՆԺԵԼԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ*

*Լուսանկարները՝ Գէորգ Պերկուպերկեանի*



## Արման Ծառուկեանն Առաւելութեան Հասաւ Չարլզ Օլիվեյրայի Նկատմամբ




*Խառը մենամարտերու UFC-300-ի շրջանակներուն մէջ կայացաւ Արման Ծառուկեանի եւ Չարլզ Օլիվեյրայի յաւակնորդական մենամարտը:*

*ԱՄՆ Լաս Վեկաս քաղաքին մէջ կայացած UFC-300 երեկոյի մենամարտերէն մէկուն ընթացքին՝ Ծառուկեանը մրցելով Օլիվեյրայի հետ առաւելութեան հասաւ երեք ռաունտէն յետոյ՝ մրցավարներու որոշմամբ: Հայաստանը ներկայացնող Ծառուկեանը զիջած է միայն առաջին ռաունտին՝ առաւելութեան հասած յաջորդ երկուքին:*

*Արման Ծառուկեանն ունի 22 յաղթանակ եւ 3 պարտութիւն:*

## Վարազդատ Լալայեանը Դարձաւ Աշխարհի Բաժակակիր




*Թայլանտի Փհուքեթ քաղաքին մէջ Ծանրամարտի աշխարհի ախոյեանութեան խաղարկութեան, որ վարկանիշային է Փարիզի ողիմպիական խաղերուն համար, Վարազդատ Լալայեանը, գլխավեր պահելով 210 քկ, դարձաւ ոսկէ մետալակիր:*

*Իսկ Սիմոն Մարտիրոսեանը իր երեք մօտեցումներէն իրացուց միայն մէկը ու 195 քկ արդիւնքով գրաւեց 5-րդ տեղը:*

## Հրաձիգ Էլմիրա Կարապետեանը Դարձած Է Ռիօ Դէ Ժանէրոյի Վարկանիշային Մրցաշարի Յաղթող



*Հայաստանի հրաձգութեան հաւաքականի անդամ Էլմիրա Կարապետեանը դարձաւ Ռիօ Տէ Ժանէրոյի միջազգային մրցաշարքի յաղթող:*

*Փարիզի Ողիմպիական խաղերու վարկանիշային մրցաշարքին Կարապետեանը 3-րդ դիրքի վրայ գտնուելով հանդերձ, եզրափակիչին դարձաւ մրցաշարքի յաղթող: Եզրափակիչին հայ հրաձիգը 240,7 կէտով առաջինն էր:*

*Էլմիրա Կարապետեանը մինչ այս արդէն իսկ ունէր Փարիզի Ողիմպիական խաղերու ուղեգիր:*

*Էլմիրա Կարապետեանը մինչ այս արդէն իսկ ունէր Փարիզի Ողիմպիական խաղերու ուղեգիր:*

*Հայաստանը Ռիոյի վարկանիշային այս մրցաշարին ներկայացուած է երեք մարզիկով՝ Էլմիրա Կարապետեան, Բենիկ Խլղաթեան, Հրաչ Բաբայեան:*

www.massisweekly.com

## Լեւերկուզենի «Պայերը» Պատմութեան Մէջ Առաջին Անգամ Գերմանիայի Ախոյեան Է



*Լեւերքուսընի «Պայերը» պատմութեան մէջ առաջին անգամ դարձաւ Գերմանիոյ ֆութպոլի ախոյեան:*

*Պունտեսլիկայի 29-րդ հանգրուանին «Պայերը» սեփական յարկի տակ ընդունելով Պրեմենի «Վերտերին»՝ առաւելութեան հասաւ 5:0 արդիւնքով:*

*Լեւերքուսընը ներկայացնող խումբը 79 կէտով՝ անհասանելի դարձաւ երկրորդ տեղը ընթացող Միւնիխի «Պայրընին» համար եւ իր պատմութեան մէջ առաջին անգամ դարձաւ Գերմանիոյ ախոյեան:*

*«Պայերը» անպարտելի մնաց ամբողջ մրցաշրջանին:*

## «Արսենալը» Եւ «Լիվերփուլը» Պարտուեցան. «Մանչըսթըր Սիթին» Բարձրացաւ Առաջին Տեղ

*Անգլիոյի Փրեմիեր Լիկայի առաջնութեան 33-րդ հանգրուանին փոխախոյեան «Արսենալը» Լոնտոնի մէջ ընդունեց «Աստոն Վիլլային» եւ պարտութիւն կրեց 0:2 արդիւնքով:*

*«Լիվերփուլ» հիւրընկալեց Լոնտոնի «Քրիսթալ Փելասին» եւ պարտութիւն կրեց 0:1 արդիւնքով:*

*Փրեմիեր լիկայի մէջ «Լիվերփուլ» սեփական խաղադաշտին վրայ պարտութիւն չէր կրած 2022-ի Հոկտեմբերէն ասդին:*

*Միւս կողմէ «Մանչըսթըր Սիթին» ընդունեց «Լութոն Թաունին» եւ յաղթեց 5:1 «Մանչըսթըր Սիթին» ընդունեց «Լուտոն Թաունին» եւ յաղթեց 5:1 հաշուով:*

*Այսպիսով 32 խաղէն յետոյ «Մանչըսթըր Սիթին» 73 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը: Երկրորդ եւ երրորդ տեղերը գտնուող «Արսենալն» ու «Լիվերփուլը» ունին 71-ական կէտ:*

## «Ինթեր» Եւ «Կալիարի» Հաւասար

*Իտալիոյ առաջնութեան 32-րդ հանգրուանին առաջատար «Ինթեր» ընդունեց «Քալիարիին» եւ յաղթանակի լաւ առիթ կորսնցուց վերջաւորութեան: Խաղը վերջացաւ հաւասար՝ 2:2 արդիւնքով:*

*Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» հիմնական կազմին մէջն էր եւ փոխարինուեցաւ 64-րդ վայրկեանին:*

*«Ինթեր» 83 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 14 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Միլանէն»:*

*Առաջնութեան աւարտին մնացած է 6 հանգրուան:*

## Արսէն Զախարեան. Ինծի Կը Նոյնացնեն Ռուսերու Եւ Ռուսաստանի Հետ, Բայց Ես Նաեւ Հայ Եմ



*Սպանական «Ռեալ Սոսիետատի» եւ Ռուսաստանի հաւաքականի 20-ամեայ կիսապաշտպան Արսէն Զախարեանը խօսած է ազգային պատկանելիութեան մասին:*

*Mundo Deportivo-ի թղթակցի հարցին՝ աւելի շատ հայ կը զգայ ինքզինք , թէ ռուս՝ Զախարեանը պատասխանած է.*

*«Ես ծնած եմ Ռուսաստան եւ ամեն ինչ ստացած եմ Ռուսաստանի մէջ: Այդ պատճառով ալ ես ինծ կը նոյնացնեմ ռուսերու եւ Ռուսաստանի հետ, բայց ես նաեւ հայ եմ, երկուսն ալ:*

*Իմ ամենասիրելի ուտեստը հայկական տոլման է»,- ըսած է Արսէն Զախարեանը:*

*Սպանիոյ այս առաջնութեան ընթացքին Արսէն Զախարեան մասնակցած է 21 հանդիպման, նշանակած է 1 կոլ, կատարած է 2 կոլային փոխանցում:*


1915
GENOCIDE
CONTINUES
2024
Armenian Genocide Commemoration Events
APRIL 24
4:30 PM
AGC
COMMUNITY WIDE
PUBLIC EVENT
PARCHER PLAZA
GLENDALE CITY HALL
613 E. BROADWAY, GLENDALE, CA
WATCH ON
APRIL 24
7:00 PM
AGC's ONE HOUR
ONLINE SPECIAL
PROGRAM
WWW.AGC1915.ORG
APRIL 21
9:00 AM - 3:00 PM
GNAZ
BLOOD DRIVE
WITH AMERICAN
RED CROSS
ARMENIAN CHURCH
OF THE NAZARENE
411 E ACACIA AVE.
GLENDALE, CA
APRIL 21
4:30PM
CITY OF GLENDALE
COMMEMORATION
ALEX THEATRE
216 N BRAND BLVD,
GLENDALE, CA
APRIL 24
10:00 AM
UACLA
RELIGIOUS
CEREMONY &
PLACEMENT OF
FLOWERS
MONTEBELLO
ARMENIAN GENOCIDE
MONUMENT
APRIL 24
12:00 PM
AYF
DEMONSTRATION
TURKISH
CONSULATE GENERAL
IN LOS ANGELES
8500 WILSHIRE BLVD
BEVERLY HILLS, CA
(888) 924 1915
AGC
Armenian Genocide
Committee